23 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 211(4829)

Azg Վազ

ISSN: 1829-1651

Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման կարեւորությունը երբեք հարցականի տակ չի դրվել

Հայոց ցեղասպանության իրողությունը կամ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման կարեւորությունը երբեք հարցականի տակ չեն դրվել եւ չեն կարող դրվել: Հայաստանի բարձրագույն ղեկավարության անունից այս մասին կրկին հիշեցրել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Հագայում, հոլանդական De Volkskrant օրաթերթին տված հարցազրույցում:

Նոյեմբերի 21-ին այցով Հագայում գտնվող Նալբանդյանը նաեւ իր հարցազրույցում նշել է, որ «1915 թ. վերաբերյալ» պատմաբանների հանձնաժողով ստեղծելու մասին Թուրքիայի արտգործնախարարի հայտարարությունները փաստորեն փորձ են հարցականի տակ դնել Ֆրանսիայի, բազմաթիվ այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը: «Դա ոչ այլ ինչ է, քան վտանգավոր ժխտողականության քաղաքականության շարունակություն, ինչի մասին Հայաստանում համապատասխան հստակ հայտարարություն էր արել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին», ասել է Նալբանդյանը:

Իսկ Թուրքիայի ԱԳ նախարարի այն պնդումների առումով, թե 2005թ. Հայաստանի նախագահին հասցեագրված Թուրքիայի վարչապետ Էրդողանի նամակին այդպես էլ պատասխան չի տրվել, Նալբանդյանը հիշեցրել է, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պատասխան նամակը ուղարկվել եւ հրապարակվել է 2005թ. ապրիլի 25-ին: «Թե՛ միջազգային հանրությունը եւ թե՛ Թուրքիայում լավատեղյակ են այդ նամակի բովանդակությանը, միգուցե բացառությամբ մի քանիսի, ինչպիսի եզրահանգման կարելի է գալ Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունից», եզրակացրել է Նալբանդյանը:

Նալբանդյանի այցելության ժամանակ տեղի է ունեցել Հագայում Հայաստանի դեսպանության պատշառական բացումը: Իր գործընկեր, Նիդեռլանդների արտգործնախարար Ուրի Ռոզենթալի հետ հանդիպմանն էլ Հայաստանի ԱԳ նախարարը նշել է, որ այսօրվա դրությամբ Հայաստանում գործում է հոլանդական կապիտալով 46 ձեռնարկություն, որոնց թիվը կարելի է կրկնապատկել համատեղ ջանքերով:

Մինչեւ նոյեմբերի 26-ը Նալբանդյանն այցելություններ կկատարի նաեւ Դանիա, Բելգիա եւ Լիտվա:

Իսկ Չեխիա այցի մասին՝ կարդալ ստորեւ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի նախագահը կմեկնի Վրաստան

Նոյեմբերի 29-30-ը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը կմեկնի Վրաստան: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, այցի ընթացքում երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցերի քննարկումից բացի, նախատեսված է մի շարք ոլորտներում հայ-վրացական համագործակցության զարգացմանն ուղղված փաստաթղթերի ստորագրման արարողություն:

Հետաքրքրական է, որ մինչ Հայաստանի նախագահի մամլո ծառայությունը կտարածեր հաղորդագրությունը, վրացական կողմը, ի դեմս Վրաստանի նախագահի աշխատակազմի, արդեն իսկ հանդես էր եկել հայտարարությամբ, նշելով, թե երբ տեղի կունենա այցելությունը: Երկու հայտարարությունների պարագայում էլ այցելության կարգավիճակի մասին ոչինչ չի հայտնվում, ասել է թե գուցե չի հստակեցվել աշխատանքային, պետական, թե՞ պաշտոնական այց ունենալու պարագան:

Ամեն դեպքում, այցն, ըստ էության, սպասված է, քանի որ թեեւ երկու կողմերը բաժանարար հիշեցնող հայտարարություններ են անում, թե հայ-վրացական հարաբերություններում չլուծվող հարցեր չկան, այդուհանդերձ, հստակ է, որ խնդիրները մեր հարեւանի հետ բազմաթիվ են, հատկապես, երբ Ջավախքում Վրաստանի վարած քաղաքականությունը մեծապես ձգտում է այն արդյունքին, ինչ կա արդեն իսկ թիֆլիսահայության առումով. ոչ միաբան հայ բնակչություն, որեւէ կերպ առավել ակտիվ դերակատարություն ունեցող անձանց գրեթե բացակայություն, առավելապես հարմարվող եւ որեւէ հարցի դեպքում 20-30 դժգոհողների միջոցով խնդիրներ բարձրացնող իրողություն եւ այլն:

Ա. Հ.

Բեռնափոխադրողները նախարարին են ներկայացրել Վերին Լարսի ճանապարհի խնդիրները

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար **Մանուկ Վարդանյանը** երեկ ընդունել է հայ բեռնափոխադրողներին եւ լսել Վերին Լարսի անցակետին առչնվող նրանց խնդիրները: Նախարարը խոստացել է հարցը բարձրացնել վրացի գործընկերների առջեւ եւ համատեղ ուժերով լուծել ստեղծված խնդիրները:

Նախարարության հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Վրաստանի ճանապարհային դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն, վերջին 10 օրերին, ձյան առաջ տեղումների եւ սառցակալման հետեւանքով, Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարսի ճանապարհի Գուդաուրի (Պոստա)-Կոբի հատվածում, տրեյլերների, կիսատրեյլերների եւ 30-ից ավելի նստատեղ ունեցող ավտոբուսների երթեւեկությունն արգելված է: Այլ մեքենաների համար երթեւեկությունը թույլատրվում է հակատեղապտույտային շղթաների առկայության պարագայում: Երկու տանող կամրջակներով մեքենաների համար երթեւեկությունը բաց է: Նշված ճանապարհահատվածում մեքենաները կշարժվեն թունելներով՝ ձնահոսքերից պաշտպանվելու նպատակով: Ճանապարհի այլ հատվածներում երթեւեկությունը բաց է:

Ա. Մ.

Անվիճարկելի պատասխանների կարիք ունենք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ինչպե՞ս անել, որ «արդար ընտրություններ» բառերը, որոնք օգտագործում են առիթ-անառիթ մեր քաղաքական-պետական այրերը, համապատասխանեն իրենց իսկական իմաստին: Ինչպե՞ս արգելել գործարարներին խորհրդարան գնալ, որ դա նրանց համար ոչ թե արգելք լինի, այլ ընդհակառակը՝ բարի գործ: Մականունավոր մարդիկ չլինեն խորհրդարանում: Որակ ապահովենք՝ հետո էլ նույն որակը կառավարությունից պահանջելով: Սրանք խնդիրներ են, որոնցով արդեն այս ամիսներին պիտի մտահոգված լինեին հայոց քաղաքական դաշտում, քանի որ քիչ է, թե Հայաստանի նախագահն է խոստանում բարձր չափանիշներով ընտրություն, այդպիսի ընտրությունների համար մթնոլորտ ու մեխանիզմներ հիմիկվանից պիտի ստեղծվեին: Սակայն ավելի լավ է՝ միամիտ չթվանք ու իրականությանը մոտ բաներ քննենք:

Փոխվե՞լ է արդյոք հայ հասարակությունը անցած բոլոր ընտրություններից հետո: Փոփոխություն ենթադրող մի էական տարբերություն կա՝ «մարտի 1» առաջներում չի եղել: Բայց անգամ այս տարբերությամբ հետեւությունները հասարակության օգտին չեն, որ նա վերցնի ու գնա արդար ընտրության, քանի որ «մարտի 1-ի» թիվ մեկ հետեւությունն այն է, որ քաղաքացին տեսավ՝ ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական կողմերը թքած ունեն իր, իր անվտանգության, անգամ իր կյանքի իրավունքի վրա: Եվ այդ բոլորը տեսած քաղաքացին հիմա ինքը կարող է թքած ունենալ քաղաքական ուժերի վրա: Վերջին ամիսներս էլ ընդդիմությունն առաջվա պես չի աղմկում՝ հայ-հայը գնացել, վայ-վայն է մնացել, ուղղակի սպասում է իր համար պահին: Իսկ բոլորը միասին սպասում են մեկ բանի՝ իշխանական ուժերի կամ առճակատման, կամ էլ վերջնական կոմպրոմիսի: Շատերը կարծում են, թե Քոչարյանն անպայման ասելիքն ասելու է: Բայց եւ ներկա նախագահը դեռ իր հիմնական ասելիքը չի ասել: Այնպես որ՝ «Մարդը Կապուցիններին պուրակից» դեռ կվերադառնա՝ գուցե երկու ձեռքին մեկական ատրճանակ (սա փոխաբերական իմաստով ենք ասում), իսկ դա մեր երկրին կարող է տանել ցնցումների ճանապարհով: Սա հիմնական մտահոգություններից կամ մտավախություններից մեկն ու առաջինն է: Չէինք ուզենա, որ առաջվա պես ամեն մեկը գար ու դատարկախոսեր ժողովրդավարության անունից: Չէինք ուզենա անցյալ ընտրությունների պոպուլիզմն ու դեմագոգությունը՝ հոգնել ենք դրանցից մահու չափ: Կուզեինք ողջախոհություն եւ երկրի հանդեպ իրական սեր, որը չպետք է թույլ տա քաղաքական ամեն տեսակի շահատակություն:

Տես էջ 2

Պրահայում պատշաճաբար բացվեց Հայաստանի դեսպանությունը

Չեխիան Հայաստան կուղարկի միայն դիվանագետի՝ աշխատելու Լեհաստանի դեսպանությունում

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ,
Պրահա

Նոյեմբերի 22-ին Պրահայի դիվանագիտական թաղամասում պատշաճաբար բացվեց Հայաստանի դեսպանությունը: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ու Չեխիայի արտգործնախարար Կարել Շվարցենբերգը: Չեխիայում Հայաստանի դեսպան **Տիգրան Սեյրանյանը** Հայաստանի հիմնի հնչյունների ներքո բարձրացրեց ՀՀ պետական դրոշը, որից հետո երկու նախարարները կտրեցին կարմիր ժապավենն ու հավաքված բազմաթիվ հյուրերին հրավիրեցին դեսպանատուն: Դեսպանատանը իր օրհնության խոսքն ասաց եւ շնորհավորեց Հայ Առաքելական եկեղեցու Չեխիայի հոգեւոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը:

Դեսպանության շենքի բացման արարողությանը նախորդել էր երկու արտգործնախարարների հանդիպումը, որից հետո էլ ճեպազրույցի ընթացքում նրանք ամփոփեցին երկկողմ հանդիպման մանրամասները:

Տես էջ 2

«Ալիեւի վարչակարգը մերժում է այն, ինչ բխում է ադրբեջանցի եւ թուրք ժողովուրդների շահերից»

Հայտարարել է Ադրբեջանի ոստիկանական զորքերի նախկին գլխավոր հրամանատար Հաջիեւը

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ֆեհմին Հաջիեւը Ադրբեջանի ոստիկանական զորքերի նախկին գլխավոր հրամանատարն է: Նախագահ Իլհամ Ալիեւի որդի պատշաճաբարկվելուց հետո բանտարկվել է, ազատ արձակվելով՝ տեղափոխվել Ուկրաինա, որտեղ էլ շարունակվում է բնակվել: Ադրբեջանում անկախության հռչակման 20-ամյակի առթիվ հայտարարություններ է արել «Դունիա բուլթենի» կայքէջին: Թուրքական այս գործակալությունը, տպագրելով դրանք նոյեմբերի 15-ի համարում, բնութագրել է որպես «ցնցող»:

Հաջիեւը հայտարարել է, որ Ադրբեջանը սերտորեն համագործակցում է հակաթուրքական ուժերի հետ, դրանում անմիջականորեն մեղադրել է հայր եւ որդի Ալիեւներին, «Բաքվի գարուն» է անվանել «արաբական գարնան» արձագանքներն Ադրբեջանում եւ Թուրքիային հորդորել է աջակցել ընդդիմությանը:

Հակաթուրքական ուժերի հետ համագործակցության պարագայում խնդիրը, ինչ խոսք, Հեյդար եւ Իլհամ Ալիեւները չեն, այլ այսպես կոչված մեկ ազգի երկու պետության՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հակասությունները, որոնք Ադրբեջանում արտահայտվել են շեհիդների պուրակում Թուրքիայի դրոշն իջեցնելու, թուրքական մզկիթները երկրում փակելու, թուրքերեն հաղորդումների հեռարձակումը հեռուստատեսությամբ արգելելու մեջ:

Ադրբեջանն, անտեսելով Թուրքիայի համառ պահանջները, կտրականապես հրաժարվել է ճանաչել «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը», ադրբեջանցի խորհրդարանականները լքել են դահլիճը, երբ Եվրոխորհրդարանում քվեարկության է դրվել ինքնակոչ այս հանրապետությանը դիտորդի կարգավիճակ շնորհելու հարցը, անտեսելով Անկարայի մերձեցման մոտեցումը, բացասական դիրքորոշում է որդեգրել Իրանի նկատմամբ, թույլ է տվել Մոսկվային տարածել երկրում ռուսական ազդեցությունը եւ Իսրայելի հետ հարաբերությունները սերտացնելիս անտեսել է թուրք-իսրայելական հակասությունները:

Տես էջ 8

ԱԶԳ **Ընթացիկ**

Շեղության հարկ՝ նոր մոտեցում հին հարցականներով

Ինչպես հայտնի է, եկող տարվանից 30 մլն դրամ (մոտ 80 հազար դոլար) եւ ավելի արժողությամբ մեքենաների նկատմամբ կկիրառվի այսպես կոչված շեղության հարկը՝ դրանց արժեքի 20 տոկոսի չափով: Կառավարության առաջարկած «Ակցիզային հարկի մասին» օրենքում վերոնշյալ փոփոխությունը ներկայումս քննարկվում է խորհրդարանում: Այս նոր հարկատեսակը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել:

Նախ եւ առաջ, շեղության հարկ կիրառելն ինքնին նոր մոտեցում է: Իր նշանակությամբ այն խիստ սոցիալական ուղղվածություն ունի եւ այս առումով միանշանակ դրական պետք է գնահատել: Այսինքն, այս հարկատեսակի միջոցով առավել հարուստներից գանձվում եւ պետական բյուջե է մտնում լրացուցիչ գումար՝ սոցիալապես աննպաստ վիճակում գտնվողներին ուղղելու համար: Սա արդարացի մոտեցում է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մեր շատ հարուստները, գերակշիռ մեծամասնությամբ, սոցիալական պատասխանատվություն չեն զգում հասարակության եւ մասնավորապես նրա անպաշտպան խավի նկատմամբ:

Սակայն, մյուս կողմից, այս նոր հարկատեսակը քննադատության է ենթարկվում այն հիմնավորմամբ, որ լրացուցիչ խոչընդոտ է Հայաստան նոր մեքենաներ ներկրելու համար, քանի որ 20 տոկոս հավելյալ հարկն էապես թանկացնում է նրանց արժեքը: Այսինքն, փոխանակ նոր եւ թանկարժեք մեքենաներ ներմուծելու, լրացուցիչ հարկից խուսափելու համար, շատերը կնախընտրեն փոքր-ինչ ավելի էժան եւ ոչ այնքան նոր մեքենաներ ներմուծել: Նման դեպքեր, իհարկե, կլինեն, բայց կարծում ենք, որ թանկարժեք մեքենա ունենալ ցանկացողների եւ դրա հնարավորությունն ունեցողների մեծամասնության համար դրա արժեքի թեկուզ 20 տոկոս բարձրացումը արգելք չի հանդիսանա այն գնելու համար: Այլ հարց է, որ սրան զուգահեռ հարկ է նաեւ էապես բարձրացնել առավել մաշված եւ հին մեքենաների համար գանձվող բնաջրհեղեղանական վճարը, քանի որ հակառակ դեպքում Հայաստանը կվերածվի հին մեքենաների գերեզմանոցի: Արդեն հիմա Հայաստանից այլ երկիր մեքենա արտահանել եւ վաճառել հնարավոր չէ: Վրաստանում մեքենաների ներմուծման համար արտոնյալ հարկային ռեժիմ է գործում, եւ Վրաստանից Հայաստան մտած եւ մախսազերծված մեքենան, այնտեղ այլեւս մրցունակ գին չունի:

Անհասկանալի է նաեւ, թե ինչ նկատառումներով են վերոնշյալ հարկատեսակի համար հիմք ընդունվել հենց 30 մլն դրամանոց մեքենաները: Ֆինանսների նախարարի պատասխանն այս հարցին այն էր, որ իրենք հարցրել են ոլորտի մասնագետներին, իսկ նախարարության կողմից մեզ տրամադրած պատասխանում էլ նշվում է, որ հիմնական գաղափարը եղել է շեղության հարկումը եւ դրա համար էլ ընտրվել է այս շեմը: Ըստ ֆինանսների նախարարության, վերջին երկու տարիներին Հայաստան են ներմուծվել տարեկան մոտ 400 այս արժեքն ունեցող, մինչեւ 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ եւ 4000 սմ-ից ավելի շարժիչի ածխատանքային ծավալ ունեցող, շուրջ 9 մլրդ դրամ մախսային արժեքով մեքենաներ:

Շատ ավելի կարեւոր, քան շեղության հարկի համար սահմանվող շեմի հարցը, այն է, թե ինչպե՞ս է որոշվելու մախսային արժեքը՝ ըստ ձեռք բերողի հաշիվ-ապրանքագրի՞, թե՞ մախսային կոմիտեի կողմից կիրառվող հսկիչ գների հարցին: Հիշեցնենք, որ այս հարցը հիմա էլ մշտական վեճերի պատճառ է: Մեքենա գնողներն ասում են, որ իրենք ձեռք են բերել էժան գնով եւ պահանջում են մախսազերծումը կատարել իրենց ներկայացրած փաստաթղթի հիման վրա, մախսայիններն էլ պնդում են, որ շատ հաճախ մեքենա ներմուծողների հաշիվ-ապրանքագրերը կեղծ կամ որոշակի պայմանավորվածությունների արդյունք են լինում եւ մախսային արժեքն ընդունում են շուկայական գները հիմք ընդունելով: Առաջ անցնելով նշենք, որ «շուկայական գին» կոչվածն էլ շատ վիճելի հասկացություն է, նկատի ունենալով յուրաքանչյուր մեքենայի մաշվածությունը, արտադրության թվականը եւ բազմաթիվ այլ գործոններ: Բացի դրանից, ստորինակ է, բայց մախսատանը չեն հավատում անգամ հայտնի ապրանքանիշ հանդիսացող մեքենաների պաշտոնական ներմուծողների փաստաթղթերին: Մի խոսքով, այս նույն հարցերը բարձրանալու են նաեւ շեղության հարկի կիրառման ժամանակ, ստեղծելով նաեւ կոռուպցիոն ռիսկեր՝ մեքենա ներմուծողի եւ մախսավորի միջեւ շեղության հարկի տակ չընկնելու գործոնի շուրջը:

Ֆինանսների նախարարությունից խնդրել էինք նաեւ պատասխանել վերոնշյալ՝ ինչպե՞ս է որոշվելու մախսային արժեքը՝ ըստ ձեռք բերողի հաշիվ-ապրանքագրի՞, թե՞ մախսային կոմիտեի կողմից կիրառվող հսկիչ գների հարցին, եւ ստացել էինք հետեւյալ պատասխանը.

«Համաձայն ՀՀ մախսային օրենսգրքի, մախսային արժեքի որոշման կանոնները սահմանված են օրենսգրքի 87-93 հոդվածներով: Միաժամանակ, նույն օրենսգրքի 94 հոդվածով հստակ սահմանված է մախսային արժեքի որոշման կանոնների հերթականությունը, մասնավորապես ֆիքսված է, որ օրենսգրքի 87-93 հոդվածներում նշված մախսային արժեքի որոշման կանոնները կիրառվում են ըստ հերթականության, բացառությամբ այն դեպքի, երբ հայտարարատուի պահանջով օրենսգրքի 91-րդ (ՀՀ ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա ՀՀ մախսային սահմանով տեղափոխվող ապրանքների մախսային արժեքի որոշումը) եւ 92-րդ (Մախսային արժեքի որոշումը՝ ըստ հաշվարկային արժեքի) հոդվածներով նախատեսված կանոնների կիրառման հերթականությունը փոխվում է: Նման պահանջի բացակայության դեպքում կիրառվում է սահմանված հերթականությունը»:

Ակնհայտ է, որ բառերի այս կույտն իրավաբաններից հայերեն թարգմանելու կարիք ունի, քանի որ նախարարության իրավաբանները հավանաբար հայերեն չգիտեն: Կարող ենք ասել միայն, որ այս պատասխանը մեր հարցի հետ որեւէ կապ չունի: Հետեւաբար, հարցը, թե ինչպե՞ս է որոշվելու թանկարժեք մեքենաների մախսային արժեքը, մնում է անպատասխան, իսկ եզրակացությունը, որ այն չարաշահումների մեծ ճանապարհ է բացում մախսային համակարգի աշխատակիցների համար՝ անփոփոխ:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պրահայում պաշտոնապես բացվեց...

1-ին էջից

Կողմերը քննարկել էին ԵՄ «Արեւելյան գործընկերության» ծրագրի կատարման ընթացքը, տարածաշրջանային խնդիրներ: Նախարար Նալբանդյանը ներկայացրել է հայկական կողմի տեսակետները Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ տարվող բանակցություններում: Ի դեպ, այս խնդրին էդվարդ Նալբանդյանն անդրադարձավ նաեւ առավոտյան Չեխիայի դիվանագիտական ակադեմիայում կազմակերպված հանդիպման ժամանակ, ուր ներկայացրեց հայկական կողմի տեսակետներն ու պատասխանեց ներկաների հարցերին:

Արտգործնախարարությունում կայացած ճեպազրույցում Չեխիայի արտգործնախարարը պատասխանելով ադրբեջանցի լրագրողի հարցին, նշեց, որ Չեխիան առանձին չի կարող աջակցել Ղարաբաղի խնդրի լուծմանը, քանի որ դա վստահված է ԵԱՀԿ Մինսկի խմբին, իսկ փախստականների հարցը կլուծվի միայն այն ժամանակ, երբ հակամարտությունը լուծվի, ընդ որում, ըստ նախարարի, դա վերաբերում է երկու կողմերի փախստականներին:

Պատասխանելով մեր հարցին, թե ե՞րբ Չեխիան կբացի դեսպանություն Հայաստանում, պարոն Շվարցենբերգը նշեց, որ ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի պատճառով առայժմ Չեխիան ի վիճակի չէ դեսպանություն բացել Երեւանում: Փոխարենը, իրենք մի դիվանագետ կուղարկեն Երեւան, ով կաշխատի Լեհաստանի դեսպանությունում եւ կներկայացնի Չեխիան:

Գոհունակություն հայտնելով հայ- չեխական երկխոսության ներկա մակարդակից, երբ միայն վերջին երեք տարիներին երկու երկրների արտգործնախարարները եւ վարչապետերը այցելել են երկու երկրներ, աշխուժացել է գործարարների միջեւ համագործակցությունը, նախարարները հույս հայտնեցին, որ Հայաստանի դեսպանության բացումը նոր խթան կհանդիսանա երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

Նույն օրը, Հայաստանի արտգործնախարարը հանդիպեց նաեւ Չեխիայի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Սոբոտկային, իսկ երեկոյան՝ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Վերջում հիշեցնենք, որ եվրոպական այցի շրջանակներում ՀՀ արտգործնախարարը նախօրեին Հաագայում բացել էր Հայաստանի դեսպանությունը, իսկ Պրահայից մեկնելու էր Կոպենհագեն, որտեղ նույնպես պաշտոնապես կբացվի Հայաստանի դեսպանություն:

ՄՏԱՇՈՒ ՀԱՐՅԱԳՐՈՒՄՆԵՐ

Անվիճարկելի պատասխանների կարիք ունենք

1-ին էջից

Դրա համար նայենք՝ ինչ ունենք: Սկսենք տնտեսական լծակներից, քանի որ դրանցից շատ բան է կախված: Եթե դրանք ինչ-որ որոշակի խումբ մարդկանց ձեռքում են, ապա ինչպե՞ս պիտի սովորական մարդ-ինտելեկտուալը գնա խորհրդարան, ո՞վ կթողնի նրան: Իսկ ի՞նչ է Ադիբեկյանի ասած հայոց քաղաքական շուկան՝ ազդեցությունների եւ փոխազդեցությունների բորսա, որտեղ կարող են թելադրել միայն տնտեսական լծակ ունեցողները, այլ խոսքով՝ օլիգարխները: Ստացվում է, որ անգամ եթե նրանք էլ չլինեն ապագա խորհրդարանում, ապա նրանց մարդիկ կլինեն, է, ի՞նչ տարբերություն: Արդյո՞ք ընտրողը կարող է դեմ գնալ այս բոլորին, արեւ ոչ այնքան, ազնիվ եւ անազնիվ սոցիոլոգիայի, ազնիվ եւ անազնիվ քաղաքագիտության: Ահարոն Ադիբեկյանի հետեւանքով մենք, կարելի է ասել, որ ունենք քաղաքական սոցիոլոգիայի նոր տեսակ, ժանր, ինչ կուզեք անվանեք, որովհետեւ պետք է, պետք չէ՝ Ադիբեկյանն առաջարկում է իր քաղաքական վերլուծությունները: Հետաքրքրական, սակայն, հասկանում եք, անհասկանալի (կամ էլ՝ լավ էլ հասկանալի), թե ինչո՞ւ այս կամ այն պահին եւ ի՞նչ նպատակով: Քաղաքագիտությունը արդեն կանխատեսում է այն, ինչ նաեւ այսօր փորձում են քարտեզավորել իշխանական կուլիսներում՝ խորհրդարան կանցնեն ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ը, իսկ «Ժառանգության» խնդիրը մնում է



դյո՞ք ավելի չի կոշտանա պայքարը յուրաքանչյուր ընտրողի համար՝ բարձրացնելով միայն քվեի սակագինը եւ սոցիալական վիճակի պատճառով ընտրողին ոչ մի ընտրություն չթողնելով: Չեմ հիշում ով ասաց՝ այս անգամ մեկ քվեի ձայնը մոտենալու է 100 դոլարի:

Երկրորդական չէ նաեւ, թե ո՞վ է գեներացնելու հայ քաղաքական կյանքն ընտրություններից առաջ, ո՞վ դեռ կխաղա ԼՂ հարցի վրա, ո՞վ՝ մարդկանց վատ ապրելակերպի, ով՝ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների: Վերլուծաբաններից մեկը մոտեցող ընտրությունները դիտարկում է որպես նախկին եւ ներկա նախագահների (Քոչարյանի եւ Սարգսյանի) եւ նրանց կողմից կառավարվող ուժերի ճակատամարտ՝ նշելով, որ խորհրդարանական այս ընտրություններն, իսկապես, կարող են ճակատագրական լինել քաղաքական դաշտի եւ Հայաստանի ապագայի փոփոխության առումով (Ռիչարդ Կիրակոսյան): Ովքե՞ր են դերակատարները, ի՞նչ դեր են վերցնելու իրենց վրա, արդյոք դրամո՞վ են գնելու Հայաստանի ապագան, թե՞ խիղճ կունենան ընտրողին էլ ընտրություն թողնելու, արդյոք նորմալ ընտրություն անելը միայն հասարակությա՞ննն է պետք լինելու, թե՞ նաեւ որոշողները կհասկանան՝ ավելին պոկելու նպատակից բացի Հայաստանի ապագայի առումով ամեն ինչ պետք է դիտարկել:

Հիմա եթե քաղաքագետի, ոստիկանագետի եւ սպասվելիք փոփոխություններին նայում ես այս տեսանկյունից, գուցե շատ հարցեր, որոնց պատասխանը միանշանակ չէ, հասկանալի են դառնում, սակայն այդ հասկանալի լինելը չի նշանակում հանրօգուտ: Ընդհանրապես՝ այս ընտրություններում անվիճարկելի պատասխանների կարիք ունենք, որպեսզի արտաքին մարտահրավերներին առանց կասկածի եւ մենիմաստ պատասխաններ ունենանք ապագայում: Սակայն չի նկատվում դեռ, որ մերոնք ուզում են անցյալ ընտրությունների համեմատ գործելակերպ փոխել, ընդհակառակը՝ երեւում է, որ այս անգամ եւս օգտագործվելու է հասարակությանը սեղմելու ողջ արսենալը միաժամանակ՝ ուղղահայաց եւ հորիզոնական, քաղաքական օդում, ընդ որում՝ ոչ մի ուժ ադիբեկյանական կանխատեսումներով չի կարողանա մեծամասնություն կազմել: Այսպիսի կանխագծումներն արդեն կարելի է հանրության վրա ազդեցության գործիք համարել: Իսկ Ադիբեկյանի՝ «Այսօր օրակարգային են կոալիցիոն միավորումները, դա ավելի հեռանկարային է, քան փորձել միայնակ ձայներ հավաքել» մեսիջն ավելի շատ վերեւների ցանկությանն է համահունչ (չենք ասում՝ վատ ցանկություն է), քան քաղաքական ուժերի եւ հասարակության տրամադրությունների, որոնցում ավելի շատ այս պահին կոշտ մրցակցությունն է նկատելի, քան կոմպրոմիսի հակումը:

Իսկ որ քաղաքական դաշտը Ադիբեկյանը նմանեցնում է շուկայի, որտեղ Տաշիրի նման մեծ խանութ կա, կա խանութների ցանց, ինչպես նաեւ Ֆիրդուսու նման քրջանոց, է, համաձայն ենք դրան՝ քաղաքական առեւտրի տեսակետից, սակայն հանրության մեծ հատվածը, չմոռանանք, ավելի շատ առեւտուր է անում նաեւ Ֆիրդուսու նման քրջանոցի նման տեղերից, դա է նրա հնարավորությունը, դա էլ պետք է հաշվի առնել: Իսկ քաղաքական բոլոր տեղերը զբաղված լինելու մասով համաձայն չենք, քանի որ եթե տարբեր տեսակի «քաղտեխնոլոգիաները» իրենց սեւ գործը չանեն, եւ հանրության մեծ մասի մեջ արթնացվի ի տեղի, ժամանակի եւ կոչման պատասխանատվությունը, այդ տեղերը կզբաղեցվեն իսկապես նրա ընտրությամբ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

«Հնարավոր է, որ Երեւանում թուրքական խանութներ լինեն, իսկ Թուրքիայում՝ հայկական»

Ստամբուլից, Անկարայից, Իզմիրից, Դիարբեքիրից, Կարսից Հայաստան են ժամանել 50-ից ավելի թուրք գործարարներ: Երեկ Երեւանում՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի շրջանակներում եւ Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միության նախաձեռնությամբ մեկնարկեց հայ եւ թուրք գործարարների համաժողովը:

Երկօրյա համաժողովի մասնակիցները մեկ rողջ լռությամբ հարգելով Վանի երկրաշարժի զոհերի հիշատակը, անցան քննարկումների: Մասնավորապես թուրքական TAPDC ընկերության ղեկավար **Նոյան Սոյակը** շեշտեց, որ անգամ փակ սահմանների պարագայում Հայաստանի ու Թուրքիայի միջեւ առեւտրաշրջանառությունը կազմել է 300 մլն դոլար: Ըստ նրա՝ երբ 1997-ին հայ գործարարների հետ փորձում էին համատեղ հանդիպումներ կազմակերպել, նրանց օգնում էին վրացիները, սակայն այսօր հայ եւ թուրք գործարարները առանց միջնորդների հանդիպում են, եւ որեւէ թուրք գործարար չէր պատկերացնի, որ կարող են Հայաստան գալ, որ Երեւանում նույնիսկ թուրքական խանութներ կլինեն: Սոյակը հույս հայտնեց, որ երբեւէ Թուրքիայում էլ կլինեն հայկական խանութներ:

Նա նաեւ տեղեկացրեց, որ հայկական համարանիշներով մեքենաները օգոստոսից սկսել են մուտք գործել Թուրքիա: «Նման դրական զարգացումները մեզ շատ են ուրախացնում», հայտարարեց Սոյակը եւ հույս հայտնեց, որ համագործակցությունն էլ ավելի կզարգանա: «Հայ եւ թուրք գործարարներն առանց միջնորդների հանդիպում են իրար, եւ հնարավոր է, որ առաջիկայում Երեւանում թուրքական, իսկ Թուրքիայում հայկական խանութներ բացվեն», ասաց Սոյակը:

Իր հերթին Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանն** ընդգծեց, որ հայ եւ թուրք գործարարները շարունակում են հետաքրքրություն ցուցաբերել տնտեսական կապերի կայացման ու զարգացման ուղղությամբ, ավելին՝ «մտածում են հեռանկարային ծրագրերի մասին»: «Ես խորին համոզմունք ունեմ, որ Թուրքիայի ղեկավարությունը վերջապես կհասկանա իր սեփական ժողովրդի շահերը, անկողմնակալ քաղաքականություն կդրսեւորի, կբացի սահմանները, մենք կունենանք նորմալ միջպետական հարաբերություններ, նորմալ փոխհամագործակցություն: Այժմ փորձում ենք այս հարաբերությունների զարգացմամբ ցույց տալ Թուրքիայի ղեկավարությանը, որ փակ սահմանների դեպքում էլ տնտեսությունները համագործակցում են: Հետեւաբար ժամանակն է, որ իրենք իրենց շահը հասկանան՝ առանց երրորդ երկրների շահը փայփայելու կամ հաշվի առնելու», ասաց Ղազարյանը:

Հ. Ա.

«Շիրակէքսպո 2011»-ին կմասնակցեն թուրք գործարարներ

Կանցկացվի նաեւ կանանց դերին ու ընդգրկվածությանը նվիրված ֆորում

Շիրակի մրցունակության կենտրոնի կողմից կազմակերպվող «Շիրակէքսպո» ամենամյա ցուցահանդեսն այս տարի նոր ընդգրկում ձեռք կբերի՝ համախմբելով ինչպես 50-ի չափ հայկական, այնպես էլ շուրջ 30 թուրքական ընկերությունների: Կցուցադրվի ծառայությունների եւ արտադրանքի բազմազան տեսականի, այդ թվում՝ սննդամթերք, տեքստիլ արտադրանք, շինանյութ:

2005 թվականից Գյումրիում անցկացվող ապրանքների եւ ծառայությունների ցուցահանդեսներին վերջին տարիներին տեղական արտադրողներից բացի հրավիրվել են այլ մարզերի գործարարներ եւս, իսկ «Էքսպո 2010»-ին մասնակցեցին նաեւ Վրաստանի արտադրողներ՝ գյուղատնտեսության, սննդարդյունաբերության եւ այլ ոլորտներից: Նոյեմբերի 24-ին Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնում կայանալիք «Շիրակէքսպո 2011»-ը կազմակերպվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ, «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի, Երեւանի մամուլի ակումբի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի եւ Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների (գործատուների) միության կոնսորցիումի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի ֆինանսավորմամբ: Հայ եւ թուրք գործարարների՝ նոյեմբերի 22-ին մեկնարկած երեւանյան երկօրյա համաժողովին հաջորդող ցուցահանդեսը, կազմակերպիչների համոզմամբ, կընձեռի երկու կողմերի գործարար շրջանակների համագործակցության խթանման եւս մեկ հնարավորություն:

Նույն օրը քաղաքի «Արաֆս» հյուրանոցային համալիրում կայանալիք «Կանայք որպես տարածաշրջանային տնտեսական զարգացման առաջատարներ» ֆորումը միջոցառման մասնակիցներին հնարավորություն կընձեռի քննարկելու Հայաստանի ու Թուրքիայի տնտեսություններին, բիզնեսում կանանց դերին ու ընդգրկվածությանը, երկու երկրների արտադրության եւ ծառայությունների ոլորտներում առկա ներդրումային ռիսկերին վերաբերող եւ բազմաթիվ այլ հարցեր:

Գ. Մ.

Հակիրճ լուրեր Ավստրալիայի հայկական եկեղեցու թեմից

* Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայկական եկեղեցու թեմի առաջնորդ Աղան արքեպիսկոպոս Բալիոզյանի հանձնարարությամբ Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում նոյեմբերի 13-ին սուրբ պատարագ մատուցելուց եւ տեղի հայ համայնքի հետ հանդիպումներ ունենալուց հետո, հայր Պարգեւ Քարքաշյանը վերադարձել է Սիդնեյ:

* Նոյեմբերի 20-ին՝ սուրբ պատարագի ընթացքում թեմի առաջնորդ Աղան արքեպիսկոպոս Բալիոզյանը Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կարգադրությամբ եւ օրհնությամբ Սուրբ Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Ավետիս Համբարձումյանին լանջախաչով է պարգեւատրել նրա ձեռադրման երրորդ տարեդարձի առիթով:

Հ. Ծ.

ԲԱՐՔԵՐ

«Գոլդ» համարներով «լավ տղաներն» ու զինծառայողները

Երկու օր առաջ զորամասերից մեկից ՊՆ Աբովյանի ռազմական ոստիկանության բաժին հեռախոսագիր է ստացվել, որ երեկոյան 19:20-ի սահմաններում մի խումբ քաղաքացիներ վրաերթի են ենթարկել ժամկետային զինծառայող, սերժանտ Արմեն Սանթոյանին: Պարզվել է, որ նույն զորամասի ժամկետային զինծառայող նորակոչիկ Հ. Հարությունյանին տեսակցելու է եկել նրա ավագ եղբայրը՝ Հայկ Հարությունյանն ու ցանկացել է ընկերների հետ մուտք գործել զորամաս: Զինծառայողների եւ քաղաքացիների միջեւ սկսված վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, զորամասի ժամկետային երեք զինծառայողներ ստացել են մարմնական վնասվածքներ: Երիտասարդ քաղաքացիները, որ վարում էին «գոլդ» համարներով շքեղ մեքենաներ՝ «Պորշ Կայեն» եւ BMW դիմել են փախուստի՝ վրաերթի ենթարկելով ժամկետային զինծառայող Սանթոյանին:

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության եւ ՀՀ ոստիկանության ձեռնարկած օպերատիվ-հետախուզական համատեղ միջոցառումներն արդյունավետ են եղել: Բերման են ենթարկվել փախուստի դիմած քաղաքացիներից հինգը: Հանցագործության կասկածանքով հարուցվել է քրեական գործ: Որպես կասկածյալ ձերբակալվել է Արսեն Արիստակեսյանը: Համապատասխան որոնողական աշխատանքներ են իրականացվում միջադեպին մասնակից այլ անձանց հայտնաբերելու:

Հ. Հ.

«Բիզնես» զինվորական թեյարաններում՝ զինվորների գումարներով

«Ծառայում եմ հայրենիքիս», այս կարգախոսն է իշխում բանակում, որտեղ պետք է յուրաքանչյուր երիտասարդ դառնա տղամարդ եւ պաշտպանի իր հայրենիքը թշնամուց: Իսկ այս գործընթացի համար բանակում կա՞ն բարենպաստ պայմաններ եւ թքնոլորտ, դժվար է ասել:

Երեսունութամյա տիկին Ալինայի որդին հինգ ամսվա ծառայող է արդեն: Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում տիկին Ալինան երեք լիցքավորման քարտ կոդեր է ուղարկում որդուն: Իսկ ի՞նչ է անում զինվորը բանակում այդ կոդերը՝ յուրաքանչյուր լիցքավորման քարտի կոդերի հաշվին նա կարող է առեւտուր կատարել թեյարանից, որը զինվորները «չայնի» են անվանում: Ընդ որում, քարտի հազար դրամի փոխարեն նա կարող է առեւտուր կատարել միայն 700 դրամի, մնացյալ մնում է թեյարանին: Շահավետ բիզնես է, որը ծաղկում է զինվորների գումարներով:

Տիկին Ալինան նշում է նաեւ, որ իր սոցիալական վիճակը այդքան էլ լավ չէ, եւ նա ստիպված պարտքով է այդ լիցքավորման քարտերը գնում եւ ուղարկում:

- Ի՞նչ անեմ, չեմ կարող որդուս առանց ծխախոտի թողնել, իսկ երբ հերթապահում է, առանց դրա չի կարողանում՝ քնում է: Ծնողն ամեն ինչի պատրաստ է հանուն զավակի: Այս ամենը բաց գիտակցելով՝ «թեյարանի բիզնեսմենները» օգտվում են ստեղծված հնարավորությունից եւ զինվորների միջոցով գումար են վաստակում չկատարված գնումների հաշվին:

Լ. Մ.

2012-ից համաշխարհությունները կխոշորացվեն

Հաջորդ տարվանից համաշխարհությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով կառավարման միասնական մոդել եւ աշխատանքային նոր ծրագիր կներդրվեն: Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** վարչական շրջանների ղեկավարների, կոմունալ բաժինների պետերի եւ համաշխարհությունների ղեկավարների հետ խորհրդակցությանը ընդգծել է, որ լավ արդյունքներ ցուցաբերած մի շարք համաշխարհություններին զուգահեռ, մայրաքաղաքում քիչ չեն նաեւ պարտականություններում թերացող, անբավարար գործունեություն ծավալող համաշխարհությունները, ինչն անընդունելի է եւ հարուցում է բնակչության արդարացի դժգոհությունը:

«Մեր շատ համաշխարհություններ հավաքագրված միջոցների 70-80 տոկոսը հատկացնում են աշխատավարձի ֆոնդին եւ միայն 20-30 տոկոս մնացյալ միջոցներով են իրականացնում իրենց պարտականությունները. այնինչ բնակիչների սպասելիքներն արդարացնելու համար անհրաժեշտ է ունենալ հակառակ պատկերը: Իրենց պարտականությունների մեջ թերացող եւ ցածր օգտակար գործողության գործակից ունեցող համաշխարհություններ մեզ պետք չեն: Դա է պատճառը, որ հաջորդ տարեսկզբից մենք անցնելու ենք համաշխարհությունների խոշորացման մոդելին՝ փոքր համաշխարհությունները միացնելով մեծերին», ասաց քաղաքապետը՝ հավելելով, որ լիազոր մարմիններն եւ վարչական շրջանների կառավարմանը հանձնված համաշխարհությունները եւս պետք է ներառվեն համաշխարհությունների կազմի մեջ:

Համաշխարհությունների ղեկավարները կողմ են արտահայտվել համաշխարհությունների խոշորացմանը: Նրանց մեկնաբանությամբ՝ կհաջողվի աղքահովել սեփական ծախսերի մասով քաղաքապետի նախանշած ծախսային հարաբերակցությունը: Տարոն Մարգարյանը վարչական շրջանների ղեկավարներին եւ կոմունալ բաժինների պետերին հանձնարարել է մեծ ուշադրություն դարձնել համաշխարհությունների գործունեությանը՝ հետեւել բյուջեի ձեւավորմանն ու նախատեսված ծախսերի իրականացմանը, պարտադիր նորմերի պահպանմանն ու բնակչությանը ներկայացվող պարբերական հաշվետվություններին:

Նա հանձնարարել է մեկամսյա ժամկետում աշխատանքներ տանել համաշխարհությունների խոշորացման մասին բնակիչներին իրազեկելու եւ բուն խոշորացման մասով քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Հ. Հ.

ԱԶԳ Դասախոսի իրավունքով

Խոսքի արժեքը

Օրաթերթերից մեկում «Կրթության նախարարության եվրոդամես խաղերը եւ անգիրի հայկական դպրոցը» վերնագրով հոդվածում մենք խոսել ենք կրթական նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու մասին կրթության նախարարության հավաստիացումների եւ հայոց լեզվի ուսուցման մեջ աշակերտներին անգիրի մղելու արատավոր մեթոդիկայի միջեւ գոյություն ունեցող հակասությունից: Առիթը հայոց լեզվի 7-րդ դասարանի գործող դասագիրքն էր:

Մեր հոդվածին «Լռության արժեքը» վերնագրով հոդվածով պատասխանել է հայոց լեզվի հիշյալ դասագրքի համահեղինակ Փառանձեմ Մելթիխանյանը (Տես՝ **«Ազգ»** 5 նոյ. 2011թ.):

Լավ կլիներ՝ չպատասխաներ, որովհետեւ անհարմար վիճակ է ստեղծել իր համար ու խայտառակել իրեն: Փողոցային լեզվակռիվ հիշեցնող այս հրապարակումը վստահաբար աշխատեց ստորագրողի դեմ: Այո՛, մարդ պիտի իմանա ոչ միայն լռության, այլեւ խոսքի արժեքը: Բանավեճի մեջ մտած հեղինակը, սեւացնելով, քանիցս վիրավորելով մեզ, հանրությանը դրական կողմերով է փորձում ներկայանալ:

Ահա թե ինչպիսին է ինքն ըստ իր գրածի:

1. Ծանրակշիռ մարդու տպավորություն ստեղծելու նպատակով իր գրությունն սկսել է աստվածաշնչյան մեջբերումով եւ ավարտել մեզ ուղղված կոչով՝ «ապաշխարե՛ք, քանզի աստծո գործերն անքննելի են»: «Բարեպաշտ» այս կինը հույսը դրել է միամիտ ընթերցողի դյուրահավատության վրա՝ մոռանալով, որ իրեն, իր բարոյական սկզբունքները, գործելակերպը, հավատի եւ պաշտամունքի առարկան վաղուց հայտնի են հանրությանը. վկա՝ ընդունելության քննությունները, դրանց համար իր պատրաստած խոտան թեստերը, տարիներ առաջ իր կազմած ուղղագրական վայ բառարանին առնչվող մեմենայությունները... Եվ մոռացել է, որ Ամենակալի անունը մեծատառով են գրում եւ ամեն անգամ անտեղի բերանը չեն առնում:

2. Ընթերցողներին փորձում է ներկայանալ իբրեւ ուսուցչամեծար մարդ: Մեծարում է Էդ. Աղայանին, Հովի. Բարսեղյանին, հանում երկինք, ներքեւից նայում նրանց: Մինչ այդ հասցրել է ճարպկորեն կոչել պրոֆ. Բարսեղյանին, դառնալ համահեղինակ եւ ավերել ժամանակին իր դերը կատարած դասագիրքը: Գրում է. «Դասագրքի վրա պետք է լիներ նաեւ Էդ. Աղայանի անունը, որը, սակայն, ընդամենը տեխնիկական պատճառով հանվեց, բայց մեծանուն հայագետի վաստակը դասագրքում հավուր պատշաճի ներկայացված է»: Բան հասկացա՞ք. իր ուսուցչին պատշում է, բայց նրա անունը տեխնիկական պատճառով չի գրվել հեղինակների շարքում: Հիրավի ուսուցչամեծար մանկավարժ է: Իսկ «հավուր պատշաճի» կապակցության գործածությունը չենք քննարկում. միեւնույն է՝ չի սովորելու, անչափ համառ է:

3. Իբր համեստ, հուզական անձնավորություն է: Ահա՝ «Եվ երբ դասագրքի խմբագիր Լիանա Հովսեփյանը առաջին անգամ իր ձեռքով իմ անունը գրեց գրքի վրա, ես խոստովանում եմ ոչ թե ձեր, այլ ողջ հանրության առջեւ, որ արտասվեցի հուզմունքից, արտասվեցի ինձ բաժին ընկած բախտից ու ճակատագրից»: «Գյուղում մեծացած աղջնակին» (իր խոսքերն են) թվում է, թե իր հետ պիտի լան թերթի հազարավոր ընթերցողները. ճիշտ եւ ճիշտ բրազիլական սերիալի հերոսուհու «բախտ ու ճակատագիր»:

Միայն մի բան է մնում անհասկանալի. հեղինակի անունը խմբագի՞րն է գրում:

Եվ ... կրկին լեզվական անհաջողություն: Իմ մասին քանիցս գրում է հոգնակիով (դուք, ձեր), բայց մոռանում է ուղղագրական կանոնը պահպանել եւ դերանունը մեծատառով գրել: Անշուշտ չէինք նեղանա, եթե եզակիով գրեր, որովհետեւ հայհոյելիս սովորաբար եզակին են գործածում: Եվ հետո, պիտի հասկանա, որ անարժան մարդու գովասանքն արդեն անպատվություն է: (*)

Ի դեպ, չենք բացառում, որ Փառանձեմի արցունքներին հավատացողներ կլինեն: Սակայն միայն նրան չճանաչողները: Պիտի խոստովանեմ, որ տարիներ առաջ, երբ բացօթյա սրճարանում արցունքն աչքերին ինձ աղերսում էր իրեն «մարդամեջ մտցնել», ես հավատացի: Մտածեցի. «Անմտակ է, բայց շիտակ է երեւում»: Այն ժամանակվա նախարարին հանդիպեցնելուց հետո «գյուղական աղջնակին» էլ բռնել չեղավ:

4. Մի խոստովանություն էլ է անում. «Սիրում եմ հայ դպրոցն ու հայ աշակերտին»: Այս սիրո մասին ես չեմ խոսի. թող խոսեն հազարավոր այն դիմորդները, որոնց հոգեկան աշխարհին մեծ վնաս է հասցրել հայերենով զբաղվող այս կինն իր խայտառակ հարցաթերթիկներով ու քննական արկածներով: Թող խոսեն հազարավոր ուսուցիչները, որոնց աշխատանքն էր վարկաբեկվում քննական մեթոդիկան: Ակնկալում ենք, որ հայերենի լավագույն ուսուցիչները պատասխանեն հոդվածում տեղ գտած զավեշտալի այս պնդմանը՝ «...դասագրքի վրա աշխատել է ողջ հանրապետության մանկավարժական ներուժը»: Կորած է մեր մանկավարժական միտքը, եթե նրա հավատական արդյունքը խոտան դասագիրքն է:

Իսկ աշակերտների նկատմամբ կրթության այս անխոնջ մշակի սիրո վերջին դրսեւորումը հենց իմ քննադատած դասագիրքն է, որտեղ աջ ու ձախ պահանջվում է մակբայ ու դերանուն եւ այլ բաներ անգիր անել: Իհարկե, հնարավոր է՝ ասի, թե ինքն անսահման սիրում է նաեւ հայոց լեզուն, դրա համար էլ պահանջում է ամբողջ քերականությունն անգիր անել: Ջենք դիմանում, որ չասենք՝ ձյուն գա խելքիդ:

5. Հոդվածագիրը կայանալու խնդիր ունի. հանրությանը ներկայացնում է իր գիտական ասպիրանտուրան ու կոչումը, հպարտանում՝ «Իմ գիտական գործունեության ընթացքում պարգեւատրվել եմ Հայաստանի Հանրապետության նախագահի եւ վարչապետի շնորհակալագրերով»: Եվ զարմանում է, թե ինչ փաստաթղթի հիման վրա եմ քննադատում խոտան դասագիրքը: Պարզունակ մոտեցում. շնորհակալագրերով է զինվել, ուրեմն այլեւս քննադատությունից դուրս է (կարծես Զեւսի կինն է): Ասենք, որ կարող է նաեւ դոկտորի ատիճան թոցնել, հովանավորչությամբ անգամ ակադեմիկոս դառնալ, միեւնույն է, խոտան մեջտեղ բերելու դեպքում, որքան էլ դա տիտղ լինի, պիտի քննադատվի: Իսկ քննադատելու իրավունք յուրաքանչյուր ոք ունի: Այս բանը հասկանալու համար մտավոր մեծ կարողություններ անհրաժեշտ չեն:

6. Եվ, վերջապես, հոդվածագիրը փորձում է ներկայանալ իբրեւ մայրապաշտ, հայրենասեր, որ իր դիմանկարի մեջ պակաս տեղ չլինի: Մենք քննադատում ենք, որ բոլորովին անհասկանալի է հայոց լեզվի դասագրքում երկու բանաստեղծություն անգիր հանձնարարելը (մեկը Եղ. Չարենցի «Մորս համար գազելն» է, որը, ի դեպ, նախորդ դասարանի համար մեր գրած դասագրքում արդեն զետեղված է, եւ դասագիրք գրող այս կինն անտեղյակ է դրանից, մյուսը՝ Արտեմ Վարդանյանի «Ասաց՝ գարուն է»-ն): Մենք ասում ենք ծով, նա հասկանում է ցախավել: Եվ բացվում է «գյուղական աղջկա» երկրորդ շնչառությունը, սկսում է փիլիսոփայել՝ «մայրն ու հայրենիքը սրբություններ են, դրանք չընդունողը մարդ կոչվելու իրավունք չունի», ապա գալիս են զառանցանք հիշեցնող դատողություններ այն մասին, թե ինչով է տարբերվում ասուն էակը անասունից, անասունն էլ մայր ունի եւ այլն:

Մենք խոսում ենք հայոց լեզվի դասավանդման խնդիրներից, առարկայի ծրագրից, մեզ ինչ են պատասխանում: Ճիշտ են ասում, որ բոլոր ստահակների վերջին հանգրվանը հայրենասիրությունն է: Բայց հայրենիքն այդպես չեն սիրում՝ նրանից միայն քամելով, զրուկի նման նրա ու նրա զավակների արյունը ծծելով:

Էլ չենք խոսում այն մասին, որ հիվանդ երեւակայությանը զոռ տալով՝ ապուշ մի գաղափար է հղանում՝ այն առնչելով մեզ. «Միգուցե ձեր մթագնած ուղեղը ճառագի եւ մեր բերականության մեջ բայի մի նոր եղանակ հրամցնի անուս նվաստներիս»: Այ քեզ բա՞ն. իսկապես որ ցախավել:

7. Հայհոյելով փորձում է ներկայանալ իբրեւ բարեկիրթ մարդ: Քանիցս թյունն սկսել է աստվածաշնչյան մեջբերումով եւ ավարտել մեզ ուղղված կոչով՝ «ապաշխարե՛ք, քանզի աստծո գործերն անքննելի են»: «Բարեպաշտ» այս կինը հույսը դրել է միամիտ ընթերցողի դյուրահավատության վրա՝ մոռանալով, որ իրեն, իր բարոյական սկզբունքները, գործելակերպը, հավատի եւ պաշտամունքի առարկան վաղուց հայտնի են հանրությանը. վկա՝ ընդունելության քննությունները, դրանց համար իր պատրաստած խոտան թեստերը, տարիներ առաջ իր կազմած ուղղագրական վայ բառարանին առնչվող մեմենայությունները... Եվ մոռացել է, որ Ամենակալի անունը մեծատառով են գրում եւ ամեն անգամ անտեղի բերանը չեն առնում:

2. Ընթերցողներին փորձում է ներկայանալ իբրեւ ուսուցչամեծար մարդ: Մեծարում է Էդ. Աղայանին, Հովի. Բարսեղյանին, հանում երկինք, ներքեւից նայում նրանց: Մինչ այդ հասցրել է ճարպկորեն կոչել պրոֆ. Բարսեղյանին, դառնալ համահեղինակ եւ ավերել ժամանակին իր դերը կատարած դասագիրքը: Գրում է. «Դասագրքի վրա պետք է լիներ նաեւ Էդ. Աղայանի անունը, որը, սակայն, ընդամենը տեխնիկական պատճառով հանվեց, բայց մեծանուն հայագետի վաստակը դասագրքում հավուր պատշաճի ներկայացված է»: Բան հասկացա՞ք. իր ուսուցչին պատշում է, բայց նրա անունը տեխնիկական պատճառով չի գրվել հեղինակների շարքում: Հիրավի ուսուցչամեծար մանկավարժ է: Իսկ «հավուր պատշաճի» կապակցության գործածությունը չենք քննարկում. միեւնույն է՝ չի սովորելու, անչափ համառ է:

3. Իբր համեստ, հուզական անձնավորություն է: Ահա՝ «Եվ երբ դասագրքի խմբագիր Լիանա Հովսեփյանը առաջին անգամ իր ձեռքով իմ անունը գրեց գրքի վրա, ես խոստովանում եմ ոչ թե ձեր, այլ ողջ հանրության առջեւ, որ արտասվեցի հուզմունքից, արտասվեցի ինձ բաժին ընկած բախտից ու ճակատագրից»: «Գյուղում մեծացած աղջնակին» (իր խոսքերն են) թվում է, թե իր հետ պիտի լան թերթի հազարավոր ընթերցողները. ճիշտ եւ ճիշտ բրազիլական սերիալի հերոսուհու «բախտ ու ճակատագիր»:

Միայն մի բան է մնում անհասկանալի. հեղինակի անունը խմբագի՞րն է գրում:

*(*) Փ. Մելթիխանյանն իր հոդվածում «բացատրություն» տվել է «դուք» եւ «ձեր» դերանունները մեծատառով չգրելու մասին, բայց խմբագրությունը հարկավել էր այն, վիրավորական լինելու պատճառով: **«Ազգ»**:*

Հետգրություն

Բարեկրթության բոլոր կանոնները շրջանցող կինը մեզ հորդորում է պահպանել մեր «առանց այն էլ քայքայված» առողջությունը: Տարօրինակ է. այդ խորհուրդը մեզ տալիս է մեկը, որը 2003-ին փորձում էր մեր ուսում խղճահարություն առաջացնել իր քայքայված առողջության պատմությամբ եւ կյանքին շատ շուտով հրաժեշտ տալու ակնարկով: Անցել է ութ տարի...

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

www.azg.am www.azgdaily.com

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ուսումնամեթոդական ձեռնարկ՝ գրադարանային-տեղեկատվական եւ մատենագիտական բարձրագույն կրթության մասին

Լույս է տեսել անվանի մատենագետ, գրադարանագետ եւ գրքագետ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետի գրադարանագիտության եւ մատենագիտության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սուքիասյանի «Գրադարանային-տեղեկատվական եւ մատենագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում» ուսումնամեթոդական ձեռնարկը (2011թ., 124 էջ), որը ծրագրային եւ բարձրացած հարցերի լայն ընդգրկումով ու մեթոդաբանական կառուցվածքով նման չունեցող եզակի հրատարակություն է գրքի պատմության մեջ:

Գրախոսվող ձեռնարկում գիտական պատշաճ մակարդակով ու հմտությամբ ներկայացված են գրադարանային-տեղեկատվական եւ մատենագիտական գործունեության հումանիտար եւ տեխնոլոգիական զարգացման բակալավրիատի եւ մագիստրատուրայի 40 առարկայական ծրագրեր՝ հիմնված համալսարանական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների եւ արտերկրի առաջավոր փորձի վրա:

Ծրագրերը (Ընդհանուր գրադարանագիտություն եւ մատենագիտություն, Փաստաթղթագիտություն, Գրքագիտություն եւ հայ գրքի պատմություն, Գիտահետազոտական աշխատանքի հիմունքներ, Համեմատական գրադարանագիտություն, Տեղեկատվական եւ տեխնոլոգիական միջոցները գրադարանում, Հայագիտական մատենագիտություն, Սոցիալական հաղորդակցություն, Գրադարանային ֆոնդեր, Գրադարանային մենեջմենթ եւ մարկետինգ, Գրադարանային մանկավարժություն, Աշխատանք ընթերցողների հետ, Գրադարանի ռազմավարական ղեկավարում, Հայ մատենագիտության պատմություն, Համաշխարհային քաղաքակրթության պատմություն եւ այլն), տեսական, պատմական եւ մեթոդական նյութերի խոր բովանդակությամբ ու արդիականությամբ անթերի են, ունեն ուսուցողական անգնահատելի նշանակություն:

Ձեռնարկի գլխավոր արժանիքներից մեկն էլ այն է, որ ընդհանուր եւ ճյուղային գիտությունների վերաբերյալ յուրաքանչյուր ծրագրին կից հեղինակը տվել է մատենագիտական հարուստ ցանկ՝ տեղեկատվական-մեթոդական անփոխարինելի օգնություն ցուցաբերելով օգտվողներին եւ մասնագետների լայն շրջանին: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնական ծրագրերի եւ ծրագրային գրականության մեծ մասը (անկախ լեզվից եւ գտնվելու վայրից) առաջին անգամ են գիտաուսումնական շրջանառության մեջ դրվում, իսկ գիրքն ամբողջությամբ համապատասխանում է բարձրագույն կրթության եւ գիտության բարեփոխումների ժամանակակից պահանջներին:

Գրքում առանձին բաժին է հատկացված նաեւ բակալավրատուրայի եւ մագիստրատուրայի պրակտիկայի ուսումնական ծրագրերին, որոնցում առաջին անգամ գիտական սկզբունքային մոտեցմամբ կարեւորված ու հիմնավորված են փաստաթղթա-տեղեկատվական համակարգերում պրակտիկայի նպատակներն ու հիմնախնդիրները, տեսության եւ պրակտիկայի փոխադարձ կապերը, զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Ստեղծված է մինչ օրս նախադեպը չունեցող կրթական ծրագրերի մի ամբողջ համակարգ, որը, մեր կարծիքով, ծանրակշիռ ներդրում է ոչ միայն Հայաստանում՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանագիտության եւ մատենագիտության ամբիոնում, այլեւ՝ Արցախի եւ հայկական Սփյուռքի համար համապատասխան որակավորմամբ մասնագետներ պատրաստելու, գիտությունն ու կրթությունը համակողմանի զարգացնելու առումով:

Այս բոլորը վկայում են պրոֆեսոր Գ. Ա. Սուքիասյանի կատարած հսկայածավալ եւ նորարարական աշխատանքի, գիտամանկավարժական եւ տեսական հարուստ փորձի մասին, ինչը անսահման գնահատելի է:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու
ԱՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան
ՀՊՄՀ գրադարանագիտության
եւ մատենագիտության ամբիոնի դասախոս

Հարը, տալը, եւ նրանց «արանքում»՝ եղբայրը

Ադրբեջանում լրջորեն հնարավոր է իշխանափոխությունը

Նոյեմբերի 14-ին Հեյդար Ալիեւի դուստրը, Իլհամ Ալիեւի քույրը՝ Սեւիլ Ալիեւան միջոցառում էր կազմակերպել Մոսկվայում՝ Իգոր Բութմանի ջազ ակումբում: Ինչպես տեղեկանում ենք «Ազադլիգից», այս միջոցառումը նվիրված է եղել Հեյդար Ալիեւի հիշատակին, սակայն Իլհամ Ալիեւի ընտանիքից ոչ ոք դրան չի մասնակցել. «Հայտնի չէ՝ Ալիեւները հրավիրվա՞ծ են եղել միջոցառմանը: Սակայն գաղտնիք չէ, որ Սեւիլ Ալիեւայի հարաբերությունները բավական լարված են եղբոր՝ Իլհամ Ալիեւի հետ: Ուստի հավանական է, որ նա պարզապես չի հրավիրել եղբորը, կամ էլ նախագահի ընտանիքն է բոյկոտել Հեյդար Ալիեւի դստեր միջոցառումը»: Այս տեղեկությունը խիստ ուշագրավ է, քանի որ Իլհամ Ալիեւը բաց չի թողնում Հեյդար Ալիեւին նվիրված որեւէ միջոցառում կամ «անթիվ-անհամար» արձանների բացման արարողություն. եթե չի էլ փաստորեն ակնարկել, որ դրա հետեւում Փաշաեւներն են կանգնած», թե ինչո՞ւ են հատկապես Փաշաեւները կանգնած տրանսպորտի նախարարի «հետեւում», դեռ կխոսենք, այժմ հավելենք նաեւ, որ Ալիեւների ձեռքից վերցրել են նաեւ «Էր Ռիադ» առեւտրի կենտրոնի եւ նրա շրջակա շրջանների տրանսպորտային գծերի վերահսկումը. «Այս պատճառով Աղըլ Ալիեւի ժառանգները կորցրել են տասնյակմիլիոնավոր դոլարներ: Այդ գումարների մի մասը պատկանում է «Էր Ռիադ» առեւտրի կենտրոնում ներդրումներ կատարած մարդկանց, որոնք այժմ հետ են պահանջում Ալիեւներից իրենց կորցրած գումարները», գրում է «Ազադլիգը»: Դե այսքանից հետո ինչպե՞ս Աղըլ Ալիեւի որդին չգնա Մոսկվա՝ հորեղբոր դստեր միջոցառմանը «փոքրինչ լիցքաթափվելու»:

Ինչ վերաբերում է տրանսպորտի նախարար Զիյա Մամեդովի «փաստին՝ ներհիշանական որոշ խմբավորումներ «պատին են դեմ տվել խորհրդարանի խոսնակ Օգթայ Ասադովին: Ու սա սկսվեց այն բանից հետո, երբ Ասադովը «ոչնակոխ արեց Ռամիզ Մեհթիեւի «այգիները»՝ դուրս գալով վերջինիս խմբավորումից: «Այժմ նախագահի աշխատակազմի ղեկավար Մեհթիեւն այլեւս չի օգնում Ասադովին», գրում է «Պոլիգոնը»: Սակայն ուշագրավ շարունակություն. «Օգթայ Ասադովը համարվում է Փաշաեւների կլանի ակտիվ սատարողներից մեկը, ավելին՝ հանձին Ասադովի Փաշաեւներն իրենց վերահսկողության տակ են պահում Ազգային ժողովը»:

Ստացվում է, որ Փաշաեւները, ավելի կոնկրետ՝ առաջին տիկին Մեհրիբան խանումը, լրջորեն ուղղվել են դեպի իշխանության ամբողջական վերահսկում, ապացուցվում են նաեւ պնդումները, որ Մեհրիբան Ալիեւան կարող է դառնալ երկրի հաջորդ նախագահ: Սակայն ամեն ինչ այնքան էլ պարզ չէ: Մասնավորապես նախագահականից «եկած» վարչապետի թեկնածու, այժմ կապի նախարար Ալի Աբասովը, «Ենի Մուսավաթի» տվյալներով, «սերտ հարաբերություններ ունի Իլհամ Ալիեւի հետ: Ալի Աբասովը հեռու է մնում ներհիշանական ինտրիգներից, կարելի է ասել, նա ընդգրկված չէ որեւէ խմբավորման մեջ: Շատերը հենց նրա թեկնածությունն են լավագույնը համարում, ու եթե արտակարգ ոչինչ տեղի չունենա, ապա Աբասովը 2012-ի սկզբներին կզբաղեցնի վարչապետի պաշտոնը»: Իսկ ի՞նչ «արտակարգ բան» կարող է կատարվել մինչեւ 2012-ի սկիզբը հարեւան երկրում: «Տարվա վերջին քաղաքական հարթակում զգացմունքների պոռթկման նախօրյակին կհեռացնեն երկրի ամենաազդեցիկ նախարարներից մեկին», գրում է «Պոլիգոնը»՝ վկայակոչելով իր «ներհիշանական աղբյուրներն», ու ընդգծում՝ «Արդեն միասնական որոշում է կայացվել ասպարեզից հանել նրան, որն այժմ լուրջ ինտրիգների մեջ է, որոնք էլ ի վերջո կավարտվեն նախարարի հեռացմամբ»:

Նախքան «ամենաազդեցիկ նախարարներից մեկին» հասնելը եկեք մեկ այլ ուշագրավ բանի վրա սեւեռվենք. «արդեն միասնական որոշում է կայացվել...», այսինքն՝ ո՞վ է կայացրել, հնարավո՞ր է մի քանի կլանանոց Ադրբեջանում միասնական որոշում կայացնել, որը բավարարի բոլորին:

Տես՝ էջ 8

Լիբիայում կազմվել է ժամանակավոր կառավարություն

Լիբիայի վարչապետ Աբդել Ռահիմ ալ Քիբը կազմել է ժամանակավոր կառավարություն, հաստատելով ապագա նախարարների ցանկը: Այդ մասին Ռոյթեր գործակալությանը հայտնել է ԱԱԽ աղբյուրներից մեկը:

Վերջինիս տվյալներով, պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակվել է Օսամա ալ Ջուվալին, որը քաղաքացիական պատերազմի ժամանակ ապստամբների հրամանատարն էր Զինտան քաղաքում: Արտգործնախարարությունը կգլխավորի ՄԱԿ-ում Լիբիայի ներկայացուցչի նախկին տեղակալ Իբրահիմ Դաբաշին: Նավթի նախկին նախարար Ալի Թարհունին դարձել է ֆինանսների նախարար, իսկ նավթի նախարարի պաշտոնը զբաղեցնելու է Հասան Զիգլամը:

Ավելի վաղ Աբդել Ռահիմ ալ Քիբը հայտարարել էր, որ կառավարության կազմում կընդգրկվեն երկրի բոլոր տարածաշրջանների ներկայացուցիչները:

Նոր կառավարությունը երկիրը կղեկավարի անցման ժամանակաշրջանում՝ մինչեւ որ Լիբիայում ձեւավորվեն իշխանության նոր կառույցներ: Առաջիկա յոթ ամիսների ընթացքում լիբիացիները կընտրեն ազգային խորհուրդ, որը կգրի երկրի սահմանադրությունը: Դրանից հետո կանցկացվեն ընդհանուր խորհրդարանական ընտրություններ:

ՆՈՐԻՑ ԽՍՏԱՅՈՒՄՆԵՐ

Հակահրանական նոր պատժամիջոցներ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կարգադրել է Իրանի դեմ ձեռնարկել նոր պատժամիջոցներ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Պատժամիջոցների նոր փաթեթը վերաբերում է Իրանի նավթաֆիմիական եւ էներգետիկ ճյուղերին: Փաթեթի ազդեցությունը տարածվում է այն բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վրա, որոնք Իրանին օգնում են էներգառեսուրսների հետախուզման եւ հանույթի ոլորտում: Ֆրանսպրեսը նշում է, որ ԱՄՆ-ը առաջին անգամ է ձեռնարկում Իրանի էներգետիկ ճյուղին ուղղակիորեն առնչվող պատժամիջոցներ:

«Վերջերս ի հայտ են եկել նոր ապացույցներ, որ Իրանի ղեկավարները շարունակում են խախտել երկրի սանձնած միջազգային պարտավորությունները», երեկ հայտարարել է պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Նրա խոսքերով՝ նոր պատժամիջոցները «այդ վարագծի պատասխանն են»:

ԱՄՆ ֆինանսների նախարարությունն իր հերթին «սեւ ցուցակի» մեջ է ընդգրկել 11 ընկերություններ եւ ֆիզիկական անձանց, որոնք «մասնակցել են Իրանի միջուկային ծրագրի մշակմանը»: Ֆինանսների նախարար Թիմոթի Գայթները Հ. Քլինթոնի հետ համատեղ կազմակերպած մամլո ասուլիսում հայտարարել է, որ ԱՄՆ-ը Իրանին կասկածում է փողերի լվացման մեջ: «Ողջ աշխարհի ֆինանսական կառույցները պետք է լավ մտածեն իրենց վտանգի ենթարկելուց եւ Իրանի հետ գործ ունենալուց առաջ», ընդգծել է Գայթները:

Այդուհանդերձ Իրանի ԿԲ-ի դեմ առայժմ պատժամիջոցներ չեն ձեռնարկվել, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, Մեծ Բրիտանիան լիովին դադարեցրել էր իր ֆինանսական հաստատությունների գործարքները Իրանի բանկերի հետ: Ֆինանսների նախարար Ջորջ Օսբորնի խոսքերով՝ տվյալ արգելքը թույլ չի տա բրիտանական ֆինանսական համակարգն օգտագործել միջուկային սպառազինությունների տարածման հետ կապված միջոցների փոխանցումների համար:

Դարձյալ երկուշաբթի օրը Կանադայի իշխանություններն արգելել էին իրենց երկրի ֆինանսական հաստատությունների բոլոր գործարքները Իրանի բանկերի (այդ թվում՝ ԿԲ-ի) հետ: Բացի դրանից, Կանադան սահմանել էր իրանական նավթաֆիմիական արդյունաբերության արտադրանքի մատակարարումների բեռնարգելք եւ «սեւ ցուցակում» էր ընդգրկել Իրանի հեղափոխական գվարդիայի ղեկավարության բոլոր հայտնի անդամներին:

Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը եւ Կանադան պատժամիջոցները խստացրին ՄԱԳԱՏԷ-ի հերթական զեկուցագրի հրապարակումից հետո, ըստ որի Իրանը 2003-ից զբաղվում է միջուկային զենքի մշակմամբ եւ ներկայումս ամեն ինչ ունի դրա ստեղծման համար:

Եգիպտոսի կառավարության հրաժարականը չգոհացրեց ցուցարարներին

Մայրաքաղաք Կահիրեում եւ այլ քաղաքներում երեք օր շարունակված բազմամարդ ցույցերից ու բախումներից հետո Եգիպտոսի կառավարությունը հրաժարական է տվել: Հրաժարականը պետք է քննության առնի Զինվորական խորհուրդը, որը երկիրը ղեկավարում է փետրվարից՝ նախագահ Հոսնի Մուբարաքի տապալումից ի վեր:

«Կառավարությունը պատասխանատու է վերջին օրերի դեպքերի համար, ուստի հրաժարական է ներկայացրել Զինվորական խորհրդին: Երկիրը ծանր ժամանակներ է ապրում, եւ դա նկատի ունենալով՝ մենք կշարունակենք աշխատել, քանի դեռ խորհուրդը չի ընդունել հրաժարականի դիմումը: Մենք քաղաքացիներին զսպվածության կոչ ենք անում հանուն երկրի կայունության, հանուն ժողովրդավարության եւ գալիք ընտրությունների», երեկ հայտարարել է կառավարության ներկայացուցիչը:

Սակայն կառավարության հրաժարականը չհանգստացրեց մայրաքաղաքի Թահրիր հրապարակում հավաքված մարդկանց: RFI ռադիոկայանը հաղորդում է, որ ցուցարարների թիվը հետզհետե ավելանում է: Շատերը գալիս են ընտանիքով, որպեսզի երեխաները հետագայում հիշեն ներկայիս իրադարձությունները: Մարդիկ պահանջում են ոչ թե զինվորականների, այլ քաղաքացիական անձանց կառավարություն: Նրանք որոշել են Թահրիր հրապարակում մնալ այնքան ժամանակ, մինչեւ գեներալները հրաժարական տան:

Շատերի կարծիքով՝ Զինվորական խորհուրդը դիտավորյալ ձգձգում է իշխանության փոխանցումը: Նոյեմբերի 28-ին նախատեսված են խորհրդարանական ընտրություններ: Հետո կկազմվի հանձնաժողով, որը կմշակի երկրի նոր սահմանադրության նախագիծը: Իսկ նախագահական ընտրությունները տեղի կունենան 2013-ին: Մինչդեռ ժողովուրդը պահանջում է արագացնել վերափոխումները:

Պ. Ք.

ՀԱԿԻՐՁ

Հանդուժողականություն երաժշտության լեզվով

Նոյեմբերի 24-ին Գաֆեսճյան կենտրոնում կկայանա կոմպոզիտոր Վիլլի Վայների «Դաբամուրային պիեսներ «in C» ժողովածուի շնորհանդեսը: Միջոցառումը կնվիրվի Հայաստանի հանրապետության անկախության եւ Հայաստանում Հրեական համայնքի գործունեության 20-ամյակին: Միջոցառումը կկազմակերպի «Մենորա» հրեական մշակույթի կենտրոնը: Նախագիծը կոչվում է «Մշակույթի միջոցով դեպի հանդուրժողականություն»: Վիլլի Վայների արվեստը ինքնատիպ է եւ յուրահատուկ: ՀՀ արվեստի վաստակավոր գործիչը ստեղծել է հրեական դասական նվագախմբային ստեղծագործությունների շարք, որոնք ներկայացված են «Ելից», «Երազանք» եւ «Իմ ժողովուրդ» ալբոմներում: Շնորհանդեսից հետո ժողովածուն կնվիրաբերվի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային, երաժշտական հաստատություններին, գրադարաններին ու դեսպանատներին:

Ժողովածուն ներկայացնում է հանդուրժողականության սկզբունքներ, մշակութային ճանաչողություն, երկխոսության կազմակերպում եւ համամարդկային մշակութային արժեքների տարածում գաղափարները:

Հ. Հ.

Ավարտվեց «Գիսանե» փառատոնը

Երեկ տեղի ունեցավ նոյեմբերի 10-ից մեկնարկած «Գիսանե» երիտասարդական թատերական փառատոնի փակումը: Լավագույնը ճանաչվեց Անի Աբրահամյանի «Կյանքի հինգ կարեւոր մասնիկ» ներկայացումը:

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր **Արմեն Մազմանյանի** խոսքերով՝ հնարավոր է, որ մյուս տարվա փառատոնին երիտասարդները ներկայանան նաեւ ֆիլմերով: Այլ երկրներից 1-2 ներկայացումներով նրանց ողջունելու կգան դերասաններ: Ըստ Ա. Մազմանյանի, հնարավոր է ժամկետային փոփոխություններ լինեն եւ «Գիսանեն» հանդես գա մարտի 20-31 ընկած ժամանակահատվածում, որն էլ կհամընկնի թատրոնի միջազգային օրվան. «Այս տարվա լավագույն ներկայացումները կներկայացվեն միջազգային այլ փառատոներում: Մոսկվայի,Կիեւի, Ալմա-Աթայի եւ այլ թատրոնների հետ կլինեն համագործակցություններ»,- ասաց նա:

Փառատոնի ժյուրիի գնահատող հանձնախմբի 9 անդամներ այդ օրերի ընթացքում հանձնախմբի նախագահ Լեւոն Իվանյանի գլխավորությամբ քննարկել են բոլոր 17 ներկայացումները եւ որոշել մրցանակակիրներին. «Այս փառատոնն աչքի է ընկնում իր համարձակությամբ, պիտի ասեմ, որ սպասում էինք ավելի թույլ աշխատանքների, սակայն, բոլորն էլ մեկը մեկից ինտելեկտուալ եւ բովանդակալից էին: Հանձնախմբի անդամները շատ տպավորված էին եւ բավականին բարդ էր մրցանակային կարգերը որոշելը»,- ասաց պրն Իվանյանը:

Հանձնախմբի անդամ **Նազենի Հովհաննիսյանին** ամենից շատ հուզել էին Շուշիի թատրոնի երեխաները: «Բոլորի աչքերը մի տեսակ փայլում էին: Մեր ազատագրված տարածքում ապրող այսօրվա երիտասարդները շատ հետաքրքրական էին»,- ասաց նա:

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Հեքիաթին հյուր» նախագիծը եզրափակվեց

ՀՀ Մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ 2007 թվականից իրականացվող «Հեքիաթին հյուր» նոստալգիային մարզային ծրագիրն այս տարի իրագործում է «Խալդ» բարեգործական հասարակական կազմակերպությունը եւ այն անցկացվեց ՀՀ Տավուշի մարզում: «Հեքիաթին հյուր» ծրագրի շրջանակներում ռեժիսոր-բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Պողոսյանը բեմադրել է «Էս էն գյուղն է, որ...» հեքիաթ-պիեսը՝ Հովի. Թումանյանի «Շունն ու կատուն», «Խոսող ձուկը» եւ «Քեֆ անողի քեֆը չի պակսի» ստեղծագործությունների հիման վրա: Այն նվիրվում է «Շունն ու կատուն» բալլադի ստեղծման 125-ամյակին:

Ծրագրի նոստալգն է ապահովել թատրոն-մանկահասակ հանդիսական կապը, նոստալգ մանուկների գեղագիտական դաստիարակությանն ու ապագա թատերասեր հանդիսատեսի ձեւավորմանը, ներկայացումները ցուցադրվեցին ՀՀ Տավուշի մարզի շուրջ 59 համայնքներում եւ գյուղերում՝ անվճար սպասարկելով մարզի անապահով ընտանիքների, մանկատների եւ հատուկ խմբերի երեխաներին: Ծրագրի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել մարզկենտրոն Իջեւանում, նոյեմբերի 4-ին: Շուրջ 10 օր ընթացող ծրագիրը դիտել են համայնքների շուրջ 4500 մանուկ հանդիսատես, որից մոտ 800-ը՝ անվճար:

Մ. Մ.

Հայ գորգագործությանը նվիրված գիտաժողով

Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում կայացավ «Հայ գորգագործական մշակույթը» խորագրով հանրապետական գիտաժողով, որը անդրադարձավ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման ու արժեւորման հարցում առաջնային նշանակություն ունեցող՝ ՀՀ թանգարաններում պահվող հայոց ժողովրդական կիրառական-գեղազարդման արվեստին վերաբերող արժեքներին, մասնավորապես գորգերին ու գորգագործությանը՝ որպես ազգային ինքնության ու ավանդույթների յուրահատուկ կրողների:

ՀՀ մշակույթի նախարարության եւ ժողովրդական ստեղծագործության կենտրոնի նախաձեռնությամբ ընթացող գիտաժողովին հնչեցին երկու տասնյակ զեկուցումներ՝ հայոց գորգագործական մշակույթի ծագումնաբանության հիմնահարցերը, հայոց ոսայնագործական մշակույթի առանձնահատուկ տեսակի՝ գոբելենի ծագումնաբանությունը, հայկական զարդարվեստի երկրաչափական մոտիվների ու դրանց արդի կիրառության հարցերը եւ այլն:

Գիտաժողովի օրերին գործում էր նաեւ «Գորգը՝ ինքնության վկայագիր» խորագրով ցուցադրությունը՝ Հովի. Շարամբեյանի անվ. ժողովրդական ստեղծագործության կենտրոնի գորգերի հավաքածուից:

Գիտաժողովը բացեց ժողովրդական ստեղծագործության կենտրոնի տնօրեն **Հովիկ Հովեյանը**: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ **Արթուր Պողոսյանը**, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն **Պավել Ավետիսյանը**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն **Արարատ Աղասյանը**:

Մ. Մ.

Արեւմտահայ պոեզիան հնչեց Սյունիքի, Կոտայքի մարզերում եւ Արցախում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք «Հանրապետական մանկապատանեկան ասմունքի IV փառատոնը» նվիրված է արեւմտահայ անվանի գրողներ՝ Պետրոս Դուրյանի 160, Վահան Թեքեյանի 133, Ռուբեն Սեւակի 126 եւ Միսաք Մեծարենցի 125 ամյակներին: Ասմունքի մրցույթ-փառատոնը անցկացվում է ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո, ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ: Փառատոնի ժյուրին օրեր առաջ հյուրընկալվեց Սյունիքի մարզում: Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում կայացավ մարզի եզրափակիչ փուլը: Նշենք, որ մարզի 120 դպրոցներից փառատոնի I փուլին մասնակցած 14,775-ից 37-ը (երկու տարիքային խմբերում) մասնակցեց եզրափակիչին, որից 7 լավագույնները ընտրվեցին մրցելու հանրապետական եզրափակիչ փուլում: Փառատոնի ժյուրիին ողջունեց նախորդ՝ «Հովհաննես Շիրազ-95» ասմունքի փառատոնի Սյունիքի մարզից հաղթող՝ Խնձորեսկի միջ. դպրոցի սան Միխայել Դիշունցը: Մարզպետի եւ մարզի անունից ողջունեցին փառատոնի ժյուրիին ու կարեւորեցին նման միջոցառման նախաձեռնությունը մարզպետարանի մշակույթի եւ պարտի բաժնի առաջատար մասնագետ Սոֆի Շալունցը եւ հյուրընկալ կրթօջախի տնօրենը: Պատանի ասմունքողների հարցերին պատասխանեցին բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Գուժ Մանուկյանը: Իսկ ՀՀ վաստակավոր արտիստ, ասմունքի վարպետ Սարգիս Նաջարյանը ներկաներին հիացրեց իր հրաբալի ասմունքով, որում ընդգրկված էին արեւմտահայ պոեզիայի գոհարներ:

Արցախցիները սպասում էին փառատոնին

ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում տոնական տրամադրություն էր տիրում: Արցախ աշխարհի 230 դպրոցներից 20.000 աշակերտ մասնակցել էր փառատոնի I փուլին եւ նրանցից 24-ը հնարավորություն էր ստացել մասնակցելու եզրափակիչին: Փառատոնի ժյուրիին Ստեփանակերտում դիմավորեց ԼՂՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար պրն Ժամհարյանը, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, գրող-հրապարակախոս Վարդգես Բաղրյանը, ԼՂՀ կրթության, գիտության նախարարության լեզվի տեսչության պետ Ժաննա Հակոբյանը, Արցախի ժող. դերասան Քաջիկ Հարությունյանը: Կարճատեւ զրույցից հետո Ստեփանակերտի մշակույթի պալատում մեկնարկեց ասմունքի փառատոնի Արցախի եզրափակիչ փուլը: Պրն **Բաղրյանն** իր ողջույնի խոսքում ասաց, որ նման միջոցառումները հրաբալի միջոց են արեւմտահայ պոեզիային ավելի մոտիկից ծանոթանալու եւ Հայաստան-Արցախ մշակութային, կրթական կապերը էլ ավելի ամրապնդելու համար: Փառատոնի ժյուրիի անունից մասնակիցներին ողջունեց ու բարձր գնահատեց IV անգամ փառատոնին մասնակցելու եւ հրաբալի արդյունքներ ձեռք բերելու համար, նախագծի հեղինակ, փառատոնի պատասխանատու քարտուղար **Մարիետա Մակարյանը**: Բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանը ներկայացրեց արեւմտահայ գրողներին, նրանց ստեղծագործական ուղին ու թողած ժառանգությունը: Քիչ անց բեմ բարձրացան արցախցի 24 պատանիներ ու հիացրին արեւմտահայերեն փայլուն ասմունքով: Խստապահանջ ժյուրին մի քանի դժվարացավ լավագույն 6-ին ընտրելու հարցում եւ ի վերջո որոշեց մեկ մասնակցի լրացուցիչ թույլ տալ մրցելու հանրապետական եզրափակիչ փուլին: Հետաքրքրական էր, որ արցախցի երիտասարդները ոչ միայն կռվել ու հաղթել գիտեն, այլ նաեւ հրաբալի ասմունքում են ու պոեզիա շատ են սիրում: Դրանում մեկ անգամ եւս համոզվեցին Ե՛ւ ժյուրիի անդամները, Ե՛ւ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ **Աշոտ Ղուլյանը**: Վերջինս, չնայած խիստ զբաղված աշխատանքային գրաֆիկին, կարողացավ ժամանակ գտնել եւ ըմբոշխնել արեւմտահայ պոեզիայի գոհարները՝ արցախցիների շուրթերից: Պրն Ղուլյանը ողջունեց ու շնորհակալություն հայտնեց նման կարեւոր փառատոները ավանդական դարձնելու համար եւ խոստացավ մշտապես աջակցել: Չքնաղ ու պատմական Արցախին ժյուրին հրաժեշտ տալուց առաջ հատուկ շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ուսուցիչներին, ծնողներին, հաղթողներին եւ տկն. Ժաննա Հակոբյանի հետ հանձնեց պատվոգրեր ու հուշանվերներ: Ուրախալի էր, որ բարձրաբերձ լեռների կատարին ծվարած Քաշաթաղի շրջանի Բերձորի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի սան, 15-ամյա Կիմա Խաչատրյանը միաձայն արժանացավ փառատոնի առաջին մրցանակին:

Հաջորդ մարզը՝ Կոտայք

Հրազդանում գտնվող մարզպետարանի շքեղ վերանորոգված դահլիճում ժյուրիին, որի կազմում էր նաեւ ԱԺ պատգամավոր Տաճատ Վարդապետյանը, դիմավորեցին ծափերով: Մարզի 101 դպրոցներից 2010 աշակերտ մասնակցել էր I փուլին եւ նրանցից 34-ը իրավունք էր ստացել մասնակցելու փառատոնի եզրափակիչին: Կոտայքի մարզի աշխատակազմի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ **Արա Սիմոնյանը** ողջունեց փառատոնի ժյուրիին ու բարձր գնահատեց արեւմտահայ պոեզիային մեծ ուշադրություն դարձնելու նման միջոցառումը: Չարենցավանի ավագ դպրոցի սան, նախորդ փառատոնի Գրան պրի մրցանակին արժանացած Սուրեն Թադեւոսյանն իր հրաբալի ասմունքով ողջունեց ներկաներին: Բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանը ներկայացրեց արեւմտահայ պոեզիայի չորս ներկայացուցիչներին ու նրանց ստեղծագործությունները: Լեփ-լեցուն դահլիճը թնդաց, երբ բեմ բարձրացավ ժյուրիի անդամ, ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանը (Մրո): Նա նախ ողջունեց ներկաներին բանաստեղծ Դեւի խոսքերով, կոմպոզիտոր Նիկոլ Գալանտերյանի երաժշտությամբ գրված «Ափսոսանք», նաեւ հայրենասիրական այլ երգերով, իսկ վերջում փառատոնը համարեց «հայ ժողովրդի երկու հատվածների միասնության երեւույթ»: Մինչ ժյուրին կամփոփեր մրցույթի արդյունքները, Կոտայքի մարզպետ **Կովալենկո Շահգելդյանն** ընդունեց ժյուրիի անդամներին, շնորհակալություն հայտնեց նման կարեւոր փառատոն անցկացնելու համար եւ բոլորին նվիրեց Գրիգոր Նարեկացու «Մայան ողբերգության» գրքից օրինակներ: Ի դեպ, նույն նվերը ստացան նաեւ մարզի 34 մասնակիցները, իսկ 6 հաղթողներն ու իրենց ուսուցիչները՝ պարգեւատրվեցին պատվոգրերով ու այլ նվերներով: Հաղթողներին ու ներկաներին ողջունեցին ու Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» կատակերգությունից հատվածներ ներկայացրին ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը եւ Ջուլիետտա Բաբայանը:

Առջեւում դեռ սպասվում է ժյուրիի այցը Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի եւ Վայոց ձորի մարզեր:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Սյունիք-Արցախ-Կոտայք

Մարզական

Նախաօլիմպիական տարում հայ մարզիկները 10 ուղեգիր են նվաճել

Մրցաշրջան-2011-ը մոտենում է ավարտին: Շուտով կամփոփվեն մարզական տարվա արդյունքները ու կորոշվեն Հայաստանի 10 լավագույն մարզիկները: Լավագույններին կանվանեն նաեւ տարբեր մարզաձեւերի ֆեդերացիաները:

Մրցաշրջան-2011-ը նախաօլիմպիական էր: Շատ մարզաձեւերի ներկայացուցիչների համար այն նշանավորվեց օլիմպիական ուղեգրերի համար մղված համառ մրցապայքարով: Օրինակ, ծանրորդներն արդեն ավարտել են օլիմպիական ուղեգրերի համար պայքարը: Ինչպես հայտնի է, այդ ուղեգրերը նրանք վիճարկեցին նախորդ տարի Անթալիայում եւ այս մրցաշրջանում Փարիզում անցկացված ծանրամարտի աշխարհի առաջնություններում ցույց տված արդյունքներով: Հաշվի էին առնվում այդ առաջնություններում թիմերի վաստակած միավորները: Ցավոք, մեր ծանրորդներն անհաջող հանդես եկան Փարիզում անցկացված աշխարհի առաջնությունում՝ նվաճելով միայն մեկ բրոնզե մեդալ: Սակայն գլխավոր անհաջողությունն այն է, որ Վանիկ Ավետիսյանը, Մելինե Դալուզյանը, Հռիփսիմե Խուրշուդյանն ու Ռուբեն Ալեքսանյանը 0 ստացան ու մեր հավաքականին հաշվարկային միավորներ չբերեցին: Այս ամենի արդյունքում Լոնդոնում Հայաստանի տղամարդկանց հավաքականը մրցահարթակ դուրս կբերի 4 ծանրորդի, իսկ կանանց մրցապայքարին կարող են մասնակցել միայն 2 հայ մարզուհիներ:



Օլիմպիական 2 ուղեգիր են նվաճել մեր ըմբիշները: Բռնցքամարտիկներից առայժմ օլիմպիադա մեկնելու իրավունք է ձեռք բերել միայն Անդրանիկ Հակոբյանը: Իսկ հայ մարզիկներից առաջինը Լոնդոնի օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք է ստացել հրաձիգ Նորայր Բախտամյանը: Այնպես որ, այսօրվա դրությամբ Հայաստանի մարզիկները օլիմպիական 10 ուղեգիր են նվաճել:

Հաջորդ մրցաշրջանում, մինչեւ օլիմպիադայի մեկնարկը կշարունակվեն վարկանիշային մրցաշարերը մի շարք մարզաձեւերից: Լոնդոն մեկնելու լավ հնարավորություններ ունեն ձյուդոյիստներ Հովհաննես Դավթյանն ու Արմեն Նազարյանը: Ուղեգրերի համար պայքարելու հնարավորություններ ունեն նաեւ ըմբիշները, բռնցքամարտիկները, թեթեւատլետները: Բացի այդ էլ, որոշ մարզաձեւերում Հայաստանի մարզիկներին ՄՕԿ-ը «կանաչ քարտ» կտրամադրի՝ իրավունք տալով դուրս գալու օլիմպիական մրցասպարեզ: Ըստ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար, ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանի, հայ մարզիկները հնարավորություն ունեն 22-23 օլիմպիական ուղեգիր նվաճելու:

Չեմպիոնները հայտնի են

Մայրաքաղաքի «Միկայի» եւ ՖԻՄԱ-ի մարզադահլիճներում իրենց մրցավեճն ավարտեցին հանդբոլի մինչեւ 17 տարեկանների պատանիների եւ աղջիկների Հայաստանի առաջնության պարգեւները վիճարկող թիմերը:

Պատանիների եզրափակիչ մրցաշարում իր հավասարը չուներ հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի թիմը, որը հաղթելով Աջափնյակի, Վանաձորի եւ Շենգավիթի հավաքականներին, 6 միավորով հռչակվեց հանրապետության չեմպիոն: 4 միավորով 2-րդ տեղը գրավեց Աջափնյակի թիմը: Վանաձորցիներն արժանացան բրոնզե մեդալների:

Աղջիկների մրցապայքարում լավագույնը Շենգավիթի հավաքականն էր, որն առավելության հասավ մրցակցուհիների նկատմամբ: 2-րդ տեղը գրավեց հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի թիմը: Բրոնզե մրցանակակիր դարձան Ստեփանակերտի հանդբոլիստուհիները:

Երեկ Երեւանում մեկնարկեց մինչեւ 14 տարեկան հանդբոլիստուհիների Հայաստանի առաջնության եզրափակիչ մրցաշարը: Այն նախատեսված էր անցկացնել Ստեփանակերտում, սակայն եղանակային պայմաններից ելնելով, որոշվեց մրցավայրը փոխել: Մրցաշարին մասնակցում են Արցախի, Վանաձորի, ՀՄԴ-ի, Շենգավիթի, Կոտայքի եւ Ստեփանակերտի հավաքականները:

Հաղթանակ անփուն գիշերվանից հետո

Տիրանայում ընթացող շախմատի աշխարհի կանանց առաջնության եզրափակիչ մրցախաղի 6-րդ պարտիան 32-րդ քայլին ավարտվեց չինացի Հոու Յիֆանի հաղթանակով, որը խաղում էր սեւ խաղաքարերով: Եվ դա այն դեպքում, որ աշխարհի չեմպիոնուհին գիշերն անցկացրել էր հիվանդանոցում: Նա որովայնի շրջանում սուր ցավեր ուներ: Բժիշկները նրա մոտ ոչ մի լուրջ խնդիր չհայտնաբերեցին, բացի հոգեբանական ճնշվածությունից: Ընդ որում Հոու Յիֆանը հրաժարվեց ցավազրկող հաբեր ընդունելուց:

6 տուրից հետո Հոու Յիֆանը 4-2 հաշվով հաղթում է Համպի Կոներուին: Մրցախաղի ավարտին մնացել է 4 տուր: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսին արժանանալու համար հնդիկ շախմատիստուհին, որ դեռեւս չի ճաշակել հաղթանակի քաղցրությունը, պետք է առնվազն 3 հաղթանակ տոնի, ինչը գրեթե անլուծելի խնդիր է:

Փեռերն ու Զոկովիչը մեկնարկեցին հաղթանակով

Լոնդոնում 8 ուժեղագույն թենիսիստների մրցավեճում պայքարի մեջ մտան նաեւ A խմբում ընդգրկվածները: Առաջինը կորոշ դուրս եկան իսպանացի Դավիթ Ֆեռերն ու բրիտանացի Էնդի Մարեյը: Երկու խաղափուլում էլ համառ պայքար ծավալվեց, որն ավարտվեց Ֆեռերի հաղթանակով (6-4, 7-5):

Մրցաշարը հաղթանակով սկսեց նաեւ սերբ Նովակ Զոկովիչը, որին համարում են հաղթողի հավակնորդներից մեկը: Զոկովիչը առաջին խաղափուլում պարտվեց չեխ Թոմաշ Բերդիխին (3-6), սակայն հաջորդ երկու խաղափուլերում առավելության հասավ մրցակցի նկատմամբ (6-3, 7-6) ու շահեց հանդիպումը:

ՀԱՄԱՌՈՏ

Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Վիեննայում կայացել է մինչեւ 18 տարեկան հանդբոլիստների Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի վիճակահանությունը: Հայաստանի հավաքականը վիճակահանության արդյունքներով ընդգրկվել է ընտրական 10-րդ խմբում, որտեղ մրցելու է Սերբիայի եւ Բելգիայի հանդբոլիստների հետ: Եզրափակիչ փուլի ուղեգիր կնվաճի միայն խմբի հաղթողը: Խմբային մրցաշարի հանդիպումները կկայանան 2012-ի մարտի 30-ից ապրիլի 1-ը:

Հայաստանի հավաքականը վաղուց է սկսել ընտրական մրցաշարի նախապատրաստությունը: Մեր հանդբոլիստները մասնակցել են միջազգային մրցաշարերի, սուգողական հանդիպումներ եւ ուսումնամարզական հավաքներ են անցկացրել: Մեր հանդբոլիստներին բավականին լուրջ մրցակիցներ են բաժին հասել, որոնք մրցակցային զգալի փորձ ունեն:

ՇԱԽՄԱՏ

Ոչ-ոքիների համաձարակ Տալի հուշամրցաշարում

Մոսկվայում ընթացող շախմատի աշխարհի 8-րդ չեմպիոն Միխայիլ Տալի հուշամրցաշարի մասնակիցները մեկօրյա հանգստից հետո կրկին նստեցին խաղասեղանների շուրջը: Ինչպես նախորդ 2 տուրերում, 6-րդ տուրի բոլոր 5 պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով: Կարծես մրցաշարի մասնակիցները վարակվել են ոչ-ոքիների համաձարակով: Յուրօրինակ ռեկորդակիրն աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդն է, որը բոլոր պարտիաներն ավարտել է ոչ-ոքի: 6-րդ տուրում նա սեւերով հաշտություն կնքեց Վասիլի Իվանչուկի հետ:

Լեւոն Արոնյանի մրցակիցը Բորիս Գելֆանդն էր: Սպիտակներով խաղացող հայ գրոսմայստերը մրցակցին հաշտության ձեռք մեկնեց 40-րդ քայլին: Նույն քայլին ավարտվեց նաեւ Յան Նեպոմնյաշչու եւ Սերգեյ Կարյակինի պարտիան: Միավորը բաժանեցին նաեւ Վլադիմիր Կրամնիկն ու Հիկարու Նակամուրան, Մագնուս Կառլսենն ու Պյոտր Սվիդլերը:

6 տուրից հետո 3,5-ական միավորով առաջատարներն են Արոնյանը, Կառլսենը, Նեպոմնյաշչին եւ Կարյակինը: Սվիդլերն, Անանդն ու Իվանչուկն ունեն 3-ական, Կրամնիկն ու Նակամուրան՝ 2,5-ական միավոր: 2 միավորով աղյուսակը եզրափակում է Գելֆանդը:

Այսօր կայանալիք 7-րդ տուրում Արոնյանը սեւերով կմրցի Կարյակինի հետ:

Գաբրիել Սարգսյանը նպաստեց թիմի հաղթանակին

Իսպանիայի Մելիլյա քաղաքում մեկնարկել է երկրի շախմատի թիմային առաջնությունը: «Լինեֆս Մեջիկ» թիմի կազմում առաջին խաղատախտակի վրա խաղում է Գաբրիել Սարգսյանը: Մեկնարկային տուրում Գաբրիելը պարտության մատնեց Սերգեյ Ֆեդորչուկին: «Լինեֆս Մեջիկը» 4,5-1,5 հաշվով պարտության մատնեց «Կայականարիասին»: Թիմի կազմում հաղթանակներ տոնեցին նաեւ Դմիտրի Սվետուշկինը, Մանուել Պերեսը եւ Խուան Կարասո Մարտինեսը: Վիկտոր Բոլոգանը ոչ-ոքի խաղաց Յուրի Կուզուբովի հետ, իսկ Սերխիո Ռոչան պարտվեց Ռեյնալդո Գոնսալեսին:

Առաջնությանը մասնակցում է 7 թիմ: 2-րդ տուրում «Լինեֆս Մեջիկը» կմրցի «Սոլվեյի» հետ:

Յուրի Դոխոյանը կգլխավորի ՌԴ տղամարդկանց հավաքականը

Ռուսաստանի շախմատի ֆեդերացիայի հերթական նիստում շախմատային անվանի մարզիչ, գրոսմայստեր Յուրի Դոխոյանին առաջարկվել է գլխավորել երկրի տղամարդկանց հավաքականը, որն անհաջող հանդես եկավ Եվրոպայի թիմային առաջնությունում: Դոխոյանը տվել է իր համաձայնությունը եւ պետք է առաջիկայում ֆեդերացիա ներկայացնի աշխատանքային ծրագիրը:

Ժամանակին հայ գրոսմայստերը երկար տարիներ աշխատել է Գարի Կասպարովի հետ: Հենց նա էր նրա մարզիչն ու մարտավարական 2004-2005-ին Անատոլի Կարպովի հետ կայացած աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մրցախաղում: Վերջին տարիներին նա հաջողությամբ գլխավորել է Ռուսաստանի կանանց հավաքականը: Նրա գլխավորությամբ ռուսաստանցի շախմատիստուհիները 2010-ին Խանտի Մանսիյսկում կայացած շախմատային օլիմպիադայում արժանացել են չեմպիոնի տիտղոսին, երկու անգամ հաղթող են ճանաչվել Եվրոպայի թիմային առաջնությունում, աշխարհի թիմային առաջնությունում էլ դարձել են փոխչեմպիոններ:

Հաջող մրցելույթներ ռուսաստանյան ռինգում

Ռուսաստանի Գոլիցինո քաղաքում անցկացված բռնցքամարտի երկրի երիտասարդական առաջնությունում մեծ հաջողության հասավ 22-ամյա նովոսիբիրսկցի բռնցքամարտիկ Արմեն Զաքարյանը: 64 կգ քաշային ների մրցավեճում Արմենը 4 տպավորիչ հաղթանակ տոնելով, մտավ եզրափակիչ: Այստեղ նրա մրցակիցը Վիտալի Դունայցեւն էր: Համառ պայքարում անցած մենամարտը շահելով 11-10 հաշվով, Արմեն Զաքարյանը հռչակվեց ՌԴ երիտասարդների չեմպիոն: Բացի նրանից, մրցաշարին մասնակցում էին եւս 9 հայ բռնցքամարտիկներ, որոնցից ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ:

Անապայում անցկացված կանանց բռնցքամարտի ՌԴ գավաթի խաղարկությունում էլ գեղազանց ելույթ ունեցավ մոսկվացի Գայանե Պանյանը: 20-ամյա մարզուհին 48 կգ քաշային կարգում բացահայտ առավելությամբ 3 հաղթանակ տոնելուց հետո եզրափակիչում 18-3 հաշվով հաղթեց նաեւ Անաստասիա Յարինային ու նվաճեց ՌԴ գավաթը:

Առաջին փուլի արգելքն էլ չհաղթահարեցին

Ամստերդամում անցկացված ձյուդոյի Գրան պրիի խաղարկության հերթական փուլում Հայաստանը ներկայացրին միայն կանայք՝ Գայանե Հարությունյանը (48 կգ) եւ Ժաննա Ստանկեւիչը (57 կգ): Երկուսն էլ անհաջող հանդես եկան՝ պայքարից դուրս մնալով առաջին փուլից:

Գայանե Հարությունյանի մրցակցուհին օլիմպիական խաղերի չեմպիոնուհի, Եվրոպայի վեցակի չեմպիոնուհի, աշխարհի առաջնությունների մրցանակակրուհի, ռումինուհի Ալինա Դումիտրուն էր, որին մեր մարզուհին պարտվեց: Դումիտրուն գրավեց 3-րդ տեղը:

Ժաննա Ստանկեւիչն էլ առաջին գոտեմարտում պարտություն կրեց ֆրանսիացի Աուտոմնե Պավիայից:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«Ալիեւի վարչակարգը մերժում է այն, ինչ բխում է ադրբեջանցի եւ թուրք ժողովուրդների շահերից»

1-ին էջից

Թուրքիան իր հերթին փորձել է ազդեցության տակ վերցնել Ադրբեջանին, միջազգային ասպարեզում վերջինին մատուցած ծառայությունների դիմաց պահանջել է իր կամքին ենթարկվել, ավելին, 1995-ի մարտին ձեռնամուխ է եղել հեղաշրջում կազմակերպել «մեկ ազգի» կրտսեր պետության մեջ: Որքան էլ Հաջիեւը Աբուլֆազ Էլչիբեյին վերագրի Անկարայի հետ բոլոր բնագավառներում համատեղ գործելու պատրաստակամություն, թուրք իսլամականները Էլիչեբեյին համարում են սիոնիզմի դրածո, իսկ կառավարող շրջանակները՝ Ադրբեջանում նախապատվությունն ի սկզբանե տալիս են մուսավաթներին:

Ըստ երեւույթին, Հաջիեւը, մեղադրելով Ալիեւներին հակաթուրքական ուժերի հետ համագործակցելու մեջ, զորավիգ է կանգնում երկրում Արեւմուտքի աջակցությանը ապավինելու ջանքեր գործադրող ադրբեջանական ընդդիմությանը: Համենայն դեպս, նրա հայտարարությունները թուրքական կայքէջին հետաքրքրական են: Ահա թե դրանց առնչությամբ ինչ է գրում «Դունիա բուլթենի» կայքէջը.

«Ադրբեջանի ոստիկանական զորքերի նախկին հրամանատար Ֆեհմին Հաջիեւն ասաց, որ անկախություն ձեռք բերելուց հետո հույս են ունեցել ինտեգրվել թուրքական եւ իսլամական աշխարհների հետ, տեր կանգնել մայրենի լեզվին ու կրոնին, սակայն Հեյդար Ալիեւի ու նրա որդու՝ Իլհամ Ալիեւի իշխանությամբ երկրում ի չիք են դարձել այս նպատակները:

Հաջիեւը կարծիք հայտնեց, թե Թուրքիան առաջինը ճանաչելով Ադրբեջանին, ձեռք էր բերել Հարավային Կովկաս եւ Միջին Ասիա ներթափանցելու համար ռազմավարական դաշնակից, բայց Ալիեւի իշխանությունները ժամանակի ընթացքում սկսել են համագործակցել Թուրքիային հակադրվող երկրների հետ եւ հակաթուրքական գործունեություն ծավալել:

Ըստ Հաջիեւի, Ադրբեջանի առաջին նախագահ Էլչիբեյը պատրաստ է եղել Թուրքիայի հետ համատեղ գործելու, սակայն հեղաշրջման հետեւանքով իշխանությունը հանձնվել է Ալիեւին եւ այդ հեղաշրջմանը արեւմտյան երկրների շարքում, ի դեմս նախագահ Սուլեյման Դեմիրելի, նպաստել է նաեւ Թուրքիան:

Այնուհետեւ Հաջիեւն ասաց. «40-ական թթ., սալֆինյան ժամանակներից սկսած Հեյդար Ալիեւը աշխատել է ՊԱԿ-ում: Իսլամական եւ թուրքական աշխարհների հետ Ադրբեջանի կապը իսպառ խզելը կոմունիստների գլխավոր առաջադրանքն էր: Այդ առումով Ալիեւը թերեւս ամենաաչքի ընկնող գործիչն էր: Ադրբեջանի դեմ նրա չարագործություններից էր Թուրքիայի սահմանամերձ շրջաններից պանթյուրքիզմի եւ պանիսլամիզմի մեղադրանքներով ադրբեջանցիների աքսորը Սիբիր: Պաշտոնավարման տարիներին սաստծս տեղեկությունները հիմք են տալիս պնդելու, որ Թուրքիայի մասնատման նպատակով ստեղծված PKK-ն Ալիեւի նվերն է խորհրդային եւ ռուսական իմպերիալիզմին: Ալիեւը որպես պետական գործիչ պատրաստված էր, սակայն նա հակաժողովրդական, հակաիսլամական եւ հակաթուրքական գաղափարախոսությանն էր հետեւում: Այդ իսկ պատճառով էլ, սանձնելով Ադրբեջանի նախագահի պաշտոնը, նա դարձավ երկիրը իսլամական ու թուրքական աշխարհներից տարանջատող աղետ մեր ժողովրդի համար»:

Հաջիեւը միաժամանակ նշեց, որ Ադրբեջանի գործող վարչակարգը ատելությամբ է վերաբերվում Թուրքիայում իշխող «Արդարություն ու բարգավաճում» կուսակցությանը: Ապա նա ավելացրեց. «Իսլամի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների թշնամանքն ու վախը պայմանավորված են նաեւ Թուրքիայի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությամբ: WikiLeaks-ի բացահայտումները ցույց են տվել, որ Ադրբեջանի իշխանությունները մերձենում են Թուրքիայի թշնամի երկրների հետ, աջակցում այն գործողություններին, որոնք նպատակամղված են թուրքական պետության թուլացմանը եւ բոլոր ասպարեզներում խոչընդոտ են դառնում Թուրքիայի համար: Վերջին 10 տարիներին դիվանագիտական գրությունների բացահայտումից պարզվել է, որ Ադրբեջանում Ալիեւների իշխանությունը Թուրքիայի ազգային շահերի առումով խիստ վնասակար է: Դրա ապացույցը «Նաբուկկոյի» նկատմամբ ադրբեջանական իշխանությունների բացասական դիրքորոշումն է: 1993-ից ի վեր Ադրբեջանի վարչակարգը բազում դավեր է նյութել ընդդեմ Թուրքիայի: Էլչիբեյի կառավարությունը անձնազոհության էր գնում Թուրքիայի համար: Ցավոք, 1993-ին Ալիեւ-Դեմիրել եղբայրությունը վերջ դրեց դրան: Ալիեւի վարչակարգը լուրջ վնասագ է պարունակում Թուրքիայի համար: Նա հետեւողականորեն մերժում է այն, ինչ բխում է ադրբեջանցի եւ թուրք ժողովուրդների շահերից»:

Վերջում Հաջիեւն ասաց, որ երկրում «Բախվի գարուն» է, գործող վարչակարգը վաղ թե ուշ պետք է տապալվի, եւ Թուրքիան տապալման այս գործընթացում պարտավոր է աջակցել ադրբեջանական ընդդիմությանը»:

Հարսը, տալը, եւ նրանց «արանքում»՝ եղբայրը

5-րդ էջից

Իհարկե ոչ, հետեւաբար այս «միասնական» որոշումը Իլհամ Ալիեւը կայացրել է կամ Փաշաեւների հետ, կամ Հեյդարովի: Եթե առաջին տարբերակն է, ապա իրոք Հեյդարովը «ամենաազդեցիկ նախարարներից մեկն է», ավելին՝ Փաշաեւների իրական հակառակորդը որոշ «ինտրիգներ» ունի իր վերահսկած Գաբալայի շրջանում, որտեղ էլ հենց, նկատենք, Իլհամ Ալիեւը օրեր առաջ այցելեց: Ու ամենահետաքրքրականը այս առումով: Ինչպես պարզ է դարձել «Ազադլիգ»-ին. «Քյամալադդին Հեյդարովի խմբավորման անդամներն սկսել են հանդես գալ միմյանց դեմ, իրականացրած «ապօրինի ֆինանսական օպերացիաների» պատճառով կասպյան ծովագնացության վարչությունը դատի է տվել հարկային նախարարությանը: «Սա հնարավոր է, որ նորմալ լիներ, եթե հարկային նախարարության պետ Ֆազիլ Մեմեդովն ու կասպյան ծովագնացության վարչության ղեկավար Այդընն Բեհիրովը չպատկանեին Քյամալադդին Հեյդարովի խմբավորմանը: Այս առումով այս հակասությունը կարող է հանգեցնել Հեյդարովի խմբավորման մասնատմանը»: Հիմա ո՞ւմ կլինի սա ձեռնտու, իհարկե Փաշաեւներին ու իհարկե նախագահ Ալիեւին, եթե նա հենց Փաշաեւների հետ է «միասնական որոշել՝ հեռացնել ամենաազդեցիկ նախարարներից մեկին»:

Սակայն հարեւան երկրում «ամենաազդեցիկ նախարարների շարքում է» իր պաշտոնում մնալու ժամկետով «Գինեսի ռեկորդակիր» պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը, որը նույնպես «այժմ լուրջ ինտրիգների մեջ է»: «Ադրբեջանի ՊՆ ղեկավարությունը կորցրել է բանակը վերահսկելու կարողությունը», այս մասին ասված է Ադրբեջանի անվտանգության եւ հասարակական պաշտպանության ասոցիացիայի հայտարարության մեջ: Իսկ «Ենի Մուսաֆաթը» տեղեկացնում է, որ միայն վերջին 10 ամիսների ընթացքում ադրբեջանական բանակում գրանցվել է զինծառայողների մահվան 89 դեպք:

Տրանսպորտի նախարար, Փաշաեւների «վարչապետ» Զիյա Մամեդովին նույնպես կսպառնա պաշտոնանկություն, եթե միայն նախագահ Ալիեւը Հեյդարովի հետ է եկել «միասնական որոշման»: Սա միջ հավանական է ինքնին, պարզապես նկատենք, որ Հեյդարովն ու Մամեդովը այժմ պայքարում են ոչ միայն ու ոչ այնքան վարչապետի պաշտոնի համար, ինչը կոնկրետ Հեյդարովի պարագայում «բավական ցածր պաշտոն կլինի», այլ երկրի նավթային հատվածում գերիշխանություն ստանալու: «Պոլիգոնը» այս կապակցությամբ գրում է. «Պայքարի հերթական փուլում Հեյդարովին հաջողվել է թույլ չտալ իր հակառակորդին ներխուժելու նավթային հատված: Սակայն վերջին պահին Մամեդովը ստացել է Ռուսաստանի եւ Բաքվի խմբավորումների օժանդակությունը, կարողացել է շտկել իրադրությունը եւ պատասխան գրոհ սկսել «արտակարգ» նախարարի դեմ»: Այս տեղեկությունից պարզ է դառնում, որ ոչ միայն Իլհամ Ալիեւը՝ Փաշաեւների խմբավորման ձեռքբերումը ու որպես «Բաքվի խմբավորում», այլեւ «Ռուսաստանի խմբավորումները» աջակցում են Մամեդովին՝ ընդդեմ Արեւմուտքի կողմից լավ ընդունված ու արեւմտյան պատվիրակներին Ադրբեջանում «լավ ընդունող» Քյամալադդին Հեյդարովի: Սա արդեն նշանակում է, որ հարեւան երկրի այն «ամենաազդեցիկ նախարարները, որոնք այժմ լուրջ ինտրիգների մեջ են», երկուսն են՝ Քյամալադդին Հեյդարովն ու Սաֆար Աբիեւը: Այստեղ, սակայն, չպետք է մոռանալ նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի գործոնը: Վերջինս կամ թույլ չի տա «նեղացնել» Հեյդարովին, կամ ինքն էլ «կնեղանա» այդ փաստից, բայց սա արդեն լրիվ այլ իրադրություն կբերի հարեւան երկրում, հետեւաբար՝ այլ խոսակցություն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ էլեկտրական էներգիայի արտադրության սակագնի վերանայման հայտով:

Գործող սակագինը՝ 11.312 դրամ/կՎժ (ներառյալ ԱԱՀ)

Առաջարկվող սակագին 16.148 դրամ/կՎժ (ներառյալ ԱԱՀ)

Վաճառվում է

Range Rover Westminster

2003/2004 թթ., մոխրագույն, շարժիչը՝ 4,4 լ., (full):

Մախսազերծված չէ:

Գերազանց վիճակ:

Գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 096 92 34 15:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՒՐԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

h/h	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը /հմ/	Շինության մակերեսը /հմ/	Մեկնարկային գինը /դրամ/
	Կրկնաճուրդով օտարվող գույքերի ցանկ				
1	Բակունցի 7/1	կաթսայատուն	151	138	5,500,000
2	Բաբաջանյան 143/3	կաթսայատուն	319	280	22,600,000
	Աճուրդով օտարվող գույքերի ցանկ				
3	Լենինգրադյան փողոց հ.16/4	կաթսայատուն	305.0	305.0	7,500,000
4	Մոսկովյան անցուղի 5շենքի թիվ 35 տարածք	ոչ բնակելի տարածք		63.7	6,370,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձիք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձիք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ դեկտեմբերի 9-ին ժ.16.00-ին , հասցեում՝ Երեւան, Արգիշտիի 1:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 9-ը, ժամը 14.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՒՐԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

h/h	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի մակերեսը	Գույքի օգտագործման նպատակը	Վարձակալության տրամադրման ժամկետը	Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար)
	Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք				
1	Բուզանդի 1/3, 2-րդ հարկ	91.5	հասարակական	5 տարի	91.5 հազ. դրամ

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեյի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձիք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ դեկտեմբերի 9-ին ժամը16-ին, հասցեում՝ Երեւան, Արգիշտիի 1:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2011թ դեկտեմբերի 9-ը, ժամը 14-ը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 22.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: